

**Հայաստանի Հանրապետությունում  
հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն  
ունեցող անձանց ծառայություններ մատուցող  
կազմակերպությունների շտեմարան**

## Բովանդակություն

Նախաբան.....	4
Մեթոդաբանություն .....	9
Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ծառայությունների մատուցման հիմնարար միջազգային չափորոշիչներն ու կարգավորումները .....	11
Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ծառայություններ մատուցող կազմակերպությունները ՀՀ-ում.....	24
Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ծառայությունների մատուցման ոլորտում առկա հիմնախնդիրները ՀՀ-ում .....	110
Առաջարկություններ.....	117
Հավելված 1. Կիսաձևայնացված հարցազրույցի հարցաշար.....	123
Հավելված 2. Փորձագիտական հարցազրույցի հարցաշար.....	138
Հավելված 3. Փորձագիտական հարցման մասնակիցների ցանկ.....	140

*Սույն շտեմարանը կազմվել է անհատ փորձագետների կողմից՝ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության նախաձեռնությամբ և ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի (UNFPA) աջակցությամբ:*

*Շտեմարանում քարտեզագրված են ՀՀ-ում հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ծառայություններ մատուցող կազմակերպությունները:*

Հեղինակային խումբ.

Գոհար Խաչատրյան

Անահիտ Զիլինգարյան

Ավետիք Մեջլումյան

Աննա Գրիգորյան

Արուս Գալստյան

## Նախաբան

Հայաստանի Հանրապետությունը՝ որպես հետխորհրդային երկիր, ժառանգել էր հոգեկան առողջության (այսուհետ՝ ՀԱ) պահպանման այնպիսի համակարգ, որտեղ հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող ծառայությունները կենտրոնացած էին միայն հոգեբուժական հիվանդանոցներում, դիսպանսերներում և խնամքի մասնագիտացված կենտրոններում:

Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձինք համարվում էին ընտանիքի խարանք, մեկուսացվում էին հասարակությունից՝ տանը կամ հոգեբուժական հաստատությունում: Ցավոք, այս մոտեցումը հիմա էլ իներցիայով շարունակվում է և դեռևս լայն տարածում ունի:

Անկախության շրջանում երկրի սոցիալ-տնտեսական վիճակը բացասական ազդեցություն է ունենում հոգեբուժական հաստատություններում մատուցվող ծառայությունների, աստիճանաբար նաև՝ շենքային պայմանների վրա: Նոր իրավիճակին համահունչ նորմատիվ իրավական դաշտի բացակայությունն էլ առաջացնում է հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ոտնահարման ռիսկեր:


Այս շրջանում ոլորտը կարգավորվում էր «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով (ընդունվել է 04.03.1996թ.), համաձայն որի՝ բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման ձևերն էին հիվանդանոցայինը և արտահիվանդանոցայինը<sup>1</sup>: Հոգեբուժության ոլորտում տրամադրվող ծառայությունները կենտրոնացած էին հոգեբուժական հիվանդանոցներում և դիսպանսերներում, «հաշվի էին առնվում» միայն առողջապահական կարիքները, սոցիալ-վերականգնողական միջամտության մասին անգամ խոսք չկար:

Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները կարգավորվում են ինչպես ընդհանուր բնույթի օրենսդրությամբ, այնպես էլ՝ հաշմանդամություն ունեցող անձանց և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքները և երաշխիքները կարգավորող հատուկ օրենսդրական կարգավորումներով:

---

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ օրենքը Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին, <https://bit.ly/1YwY6W4>


**Գծապատկեր 1.** ՀԱ ոլորտում ընդունված հիմնական նորմատիվ փաստաթղթերը Հայաստանում (սկսած 2004թ.-ից):



Վերոնշյալ փաստաթղթերով ուրվագծվում են հոգեկան առողջության պահպանմանն ուղղված սոցիալական քաղաքականության գլխավոր նպատակները, որոնք են.

- Ապահովել ստիտուցիոնալացումը,
- Անցումը՝ բժշկական մոդելից՝ սոցիալական մոդելին, հետագայում՝ իրավահեն մոդելին:

**Գծապատկեր 2.** Վերոնշյալ փաստաթղթերով սահմանված և ՀԱ ոլորտում գործածվող առանցքային հասկացությունները:



Ըստ Հայեցակարգի և Ռազմավարության՝ ապահինստիտուցիոնալացումը միակ տարբերակն է, որով հնարավոր է հաղթահարել ՀՀ-ում հոգեկան առողջության ոլորտում առկա մարտահրավերները:

Անշուշտ, սոցիալական մոդելի ներդնումն ու ապահինստիտուցիոնալացման մեկնարկը կարևորագույն քայլեր են: Ցավոք, Հայաստանում այս գաղափարներն աղավաղված են կյանքի կոչվել: Մասնավորապես, հոգեսոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց մի մասը որոշ խոշոր (մեծ տարածք և շահառուների բարձր թվաքանակ ունեցող) հաստատություններից պարզապես տեղափոխվել են ավելի փոքր (փոքր տարածք և շահառուների ցածր թվաքանակ ունեցող) հաստատություններ:

Ապահինստիտուցիոնալացման գործընթացը մեխանիկական և կոսմետիկ բնույթ է կրել, այն չի ուղեկցվել հոգեսոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի և բուժման մեթոդների ու մոտեցումների փոփոխություններով:

Նշված խնդիրների լուծումը էլ ավելի օրհասական է դառնում՝ հաշվի առնելով Հայաստանում հոգեսոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց թիվը: Ըստ ՀՀ առողջապահության նախարարության ՀՀ-ում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց թիվը կազմում է 54 հազար մարդ, ընդ որում՝ կյանքում առաջին անգամ հաստատված հոգեկան խանգարման ախտորոշումով անձանց թիվը 2559 է, որից մտավոր հետամնացությունը՝ 687 անձ<sup>2</sup>:

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների, 2017թ. Հայաստանում «հոգեկան խանգարումներ և վարքի խանգարումներ» ունենալու հիմքով հաշմանդամության կարգ է ստացել 22.265 անձ:

**Գծապատկեր 3.** Ծրագրով նախատեսված որոշ միջոցառումներն ու դրանց իրագործումը:

Նախատեսվում էր	Արդյունքը
<p><b>2</b> համայնքում ստեղծել շուրջօրյա խնամքի տներ՝ առավելագույնը <b>30</b> անձի բնակության համար:</p>	<p>Ստեղծվել է <b>1</b> խնամքի տուն (Մայիտակի խնամքի տունը)</p>
<p><b>3</b> համայնքում ստեղծել համայնքային ցերեկային կենտրոններ՝ առավելագույնը <b>30-50</b> անձի համար:</p>	<p> Չի իրականացվել</p>

<sup>2</sup> «Հոկտեմբերի 10-ը Հոգեկան առողջության համաշխարհային օրն է՝ խնդիրների ու անելիքների մասին խոսելու առիթ», ՀՀ ԱՆ մամլո հաղորդագրություն, <https://bit.ly/2X832oQ>

Առնվազն **2** համայնքում  
ստեղծել ցերեկային  
կենտրոններ երեխաների և  
դեռահասաների համար՝  
**30-50** անձի համար:

Մտեղծվել է  
**1**  
ցերեկային կենտրոն  
(«Ձորակ» ցերեկային  
կենտրոնը)

Նազմակերպել **10**  
աստարաղ բնակարաններ՝  
**3-10** անձի բնակության համար:


**X**  
Չի իրականացվել

Ստեղծել խնամքի  
**1** շուքջօրյա  
և **1** ցերեկային  
կենտրոններ ասպեցիների  
համար:

**X**  
Չի իրականացվել

Իրականում, ապահինստիտուցիոնալացումն ու սոցիալական մոդելի ներդրումը ենթադրում են ավելի խորքային փոխակերպումներ և դերակատարների առավել լայն շրջանակ (ընտանիք, ազգականներ, հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձի համար նշանակալի այլ անհատներ, հասարակությանը ծառայություններ մատուցող կառույցներ և կազմակերպություններ, ընդհանուր առմամբ, ամբողջ հասարակությունը):

**Գծապատկեր 4.** Համայնքահեն ծառայությունները՝ որպես ապահինստիտուցիոնալացման կարևոր բաղադրիչ:



Վերոնշյալ համակարգային խնդիրների առկայությամբ էր պայմանավորված այս հետազոտության **նպատակը**, այն է՝ իրականացնել ՀՀ-ում հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ծառայություններ մատուցող կազմակերպությունների քարտեզագրում՝ առկա հիմնախնդիրները բացահայտելու և հաղթահարման ուղիներ առաջարկելու համար:

Հետազոտության գործնական նպատակն էր՝ լրացնել Հայաստանի հոգեկան առողջության ոլորտում գործող կառույցների և նրանց կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ ամփոփ տեղեկատվության բացը:

Հետազոտության գլխավոր նպատակի իրագործման համար.

1. Իրականացվել է Հայաստանի կողմից ստանձնած միջազգային չափորոշիչների և ներպետական իրավական կարգավորումների վերլուծություն:
2. Կատարվել է հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց համայնքահեն ծառայությունների մատչելիության և հասանելիության ապահովման միջազգային լավագույն փորձի և միտումների վերլուծություն:
3. Ուսումնասիրվել են հոգեկան առողջության ոլորտում գործող կազմակերպություններն ու նրանց կողմից մատուցվող ծառայությունները:
4. Վեր են հանվել հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ծառայությունների մատուցման ոլորտում առկա հիմնախնդիրներն ու դրանց գլխավոր պատճառները:
5. Մշակվել են հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ծառայությունների համակարգի բարելավման, հասանելիության և արդյունավետության բարձրացման առաջարկություններ:

Կազմակերպությունների քարտեզագրման արդյունքում ստեղծված այս շտեմարանը կարող է օգտակար գործիք լինել ինչպես ոլորտի մասնագետների, այնպես էլ՝ ցանկացած շահագրգիռ անձի համար՝ տեղյակ լինելու, թե իրենց մարզերում և համայնքներում ինչ կազմակերպություններ են գործում և ինչ ծառայություններ են մատուցում:

Ոլորտային քաղաքականություն մշակող մարմինների և պաշտոնյաների համար օգտակար կարող են գտնվել ոչ միայն կազմակերպությունների քարտեզագրված տվյալները, այլև՝ առավել տարածված հիմնախնդիրների վերլուծությունն ու դրանց առաջարկվող լուծումները:

## Մեթոդաբանություն

Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ծառայություններ մատուցող կազմակերպությունների վերաբերյալ տեղեկությունները հավաքվել են մի քանի փուլով:

Առաջին փուլում տվյալներ են հավաքվել այդ կազմակերպությունների ինտերնետային կայքերից և ֆեյսբուքյան էջերից, ինչպես նաև ինտերնետային տեղեկատվական համակարգերից («Մփյուռ», «Դեղին էջեր», «Արեգ» և այլն): Կազմակերպությունների հայտնաբերման հարցում օգտակար է եղել նաև փորձագետների տրամադրած տեղեկատվությունը:

Երկրորդ փուլում.

- Իրականացվել է կիսաձևայնացված հարցաթերթերի լրացում՝ հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ծառայություններ մատուցող կազմակերպություններում: Հարցազրույցներին հիմնականում մասնակցել են կազմակերպությունների ղեկավար կազմի ներկայացուցիչները: Ղեկավար անձանց մասնակցության անհնարինության դեպքում հարցերին պատասխանել են այլ իրազեկ անձինք: Մի շարք դեպքերում հարցաթերթերը լրացվել են հեռակա կարգով՝ հեռախոսային հարցման միջոցով:
- Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ծառայություններ մատուցող կազմակերպություններին են ուղարկվել էլեկտրոնային կիսաձևայնացված հարցաթերթեր, որոնց պատասխանել են կազմակերպությունների ղեկավար կազմի ներկայացուցիչները: Ղեկավար անձանց մասնակցության անհնարինության դեպքում հարցերին պատասխանել են այլ իրազեկ անձինք:
- Փորձագիտական հարցազրույցներ են իրականացվել ոլորտի փորձառու մասնագետների և առողջապահության ոլորտի հետազոտողների հետ: Փորձագետների ընտրության համար հաշվի են առնվել նրանց մասնագիտական փորձը և թեմատիկ հրապարակումների առկայությունը (քանակը): Բացի այդ, կիրառվել է ձևակույտի մեթոդը (երբ հարցման մասնակից փորձագետները երաշխավորել են այլ փորձագետների նույն հարցաշարով հարցազրույց իրականացնելու համար): Ընդհանուր առմամբ իրականացվել է 12 փորձագիտական հարցազրույց: Հետազոտության մասնակից փորձագետների ցանկը ներկայացված է Հավելված 3-ում:

Քարտեզագրման 3-րդ փուլում հարցազրույցների և էլեկտրոնային հարցաթերթերի միջոցով հավաքված տեղեկատվությունը ներկայացվել է հետազոտության մեջ ընդգրկված կազմակերպություններին՝ լրացուցիչ ճշգրտման և, ըստ անհրաժեշտության, տվյալների վերանայման համար:

Կազմակերպությունների տրամադրած հավելյալ տեղեկությունների շնորհիվ քարտեզագրման նախնական արդյունքները ևս մեկ անգամ լրամշակվել են:

Ընդհանուր առմամբ, այս շտեմարանում տեղ են գտել 40 կազմակերպությունների տվյալներ:

Շտեմարանում տեղ չեն գտել այն կազմակերպությունները,

- որոնց տվյալները չեն գտնվել բաց աղբյուրներում կամ՝ դրանք չեն հիշատակվել փորձագետների կողմից,
- որոնց հետ հնարավոր չի եղել կապ հաստատել,
- որոնք չեն ցանկացել համագործակցել հետազոտող խմբի հետ և տեղեկություններ տրամադրել իրենց գործունեության մասին:

Կազմակերպությունները դասակարգված և ներկայացված են ըստ տեսակի՝ պետական և ոչ պետական:

Յուրաքանչյուր դասակարգման ներքո կազմակերպությունները ներկայացված են ըստ այբբենական կարգի:

## **Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ծառայությունների մատուցման հիմնարար միջազգային չափորոշիչներն ու կարգավորումները**

Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող ունեցող անձանց անկախ կյանքի ապահովման համար անհրաժեշտ ծառայությունների հիմնարար չափորոշիչներ է սահմանում Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա):

Կոնվենցիայի նպատակ է սահմանված. «աջակցել, պաշտպանել և ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց՝ լիարժեքորեն և հավասարապես օգտվել մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից, ինչպես նաև՝ ապահովել հարգանքը նրանց արժանապատվության նկատմամբ»:

Ըստ Կոնվենցիայի, «Հաշմանդամություն ունեցող անձինք են համարվում նրանք, ովքեր երկար ժամանակ տառապում են ֆիզիկական, հոգեկան, մտավոր և նյարդային հիվանդություններով, որոնք տարբեր արգելքների հետ փոխազդեցության արդյունքում կարող են խոչընդոտել, որ նրանք լիակատար և արդյունավետ մասնակցեն հասարակական կյանքին մյուսների հետ հավասար հիմունքներով»:

Անձի արժանապատվության, վատ վերաբերմունքի չենթարկվելու, կրության, աշխատանքի իրավունքի չափորոշիչներ են սահմանում նաև ՄԱԿ-ի և Եվրոպայի խորհրդի մի շարք այլ հիմնարար պայմանագրեր: Սույն ուսումնասիրության մեջ մենք կդիտարկենք մտավոր և հոգեւոցիալական հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները՝ ելնելով առավելապես Կոնվենցիայի դրույթների պահանջներից՝ որպես առավել ամփոփ, առաջադեմ և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և կարիքների վրա հիմնված փաստաթուղթ:

Հաշմանդամություն ունեցող անձանց համար ծառայությունների մատուցման հասանելիությունը անխուսափելիորեն կապվում է նրանց՝ հասարակությունում ներառվածության և անկախ ապրելու համատեքստի հետ:

Երկար տարիներ հաշմանդամություն ունեցող անձինք, ելնելով պետության կողմից վարվող առողջապահական կամ սոցիալական հենքով քաղաքականությունից, օգտվել են պետության կողմից տրամադրվող սահմանափակ ծառայություններից, որոնք հաճախ նպաստել են նրանց էլ ավելի մեկուսացմանը:

Մեկուսացման արդյունքում, լայն հասարակությանը տրամադրվող ծառայությունները հաշվի չեն առել հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները:

Այսպիսի իրավիճակը հանգեցնում է մի շարք հիմնարար իրավունքների խախտմանը. հավասարության և խտրականության չենթարկվելու իրավունքը, ազատության, վատ և արժանապատվությունը նվաստացնող և անմարդկային վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու, տեղաշարժվելու ազատության, անձնական անձեռնմխելիության, անձնական և ընտանեկան կյանքի, սեփականության, ընտանիքի և մի շարք այլ քաղաքական և այլ իրավունքներ:

Համայնքում ապրելու իրավունքը մի կողմից նախադրյալ է վերը նշված իրավունքների իրացման համար, մյուս կողմից՝ համայնքում ապրելու իրավունքը լիարժեք կերպով չի կարող ապահովվել առանց սոցիալական, կրթական, առողջապահական, մշակութային, աշխատանքային և այլ ոլորտները անձի համար հասանելի և մատչելի դարձնելու:

Կոնվենցիան արձանագրում է հաշմանդամություն ունեցող անձի անկախ ապրելու իրավունքը, միաժամանակ սահմանելով հասարակությանը հասանելի ծառայությունները հաշմանդամություն ունեցող անձանց հասանելի դարձնելու անհրաժեշտությունը:

Կոնվենցիայի 19-րդ հոդվածի համաձայն.

*«Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները ճանաչում են հաշմանդամություն ունեցող անձանց՝ համայնքում ապրելու հավասար իրավունքը՝ մյուսների հետ հավասար հիմունքներով՝ ընտրության հնարավորությամբ, ձեռնարկում են արդյունավետ և համապատասխան միջոցներ՝ օժանդակելու համար հաշմանդամություն ունեցող անձանց՝ այս իրավունքից լիակատար օգտվելուն, նրանց լիարժեք ներգրավվածությանը և մասնակցությանը համայնքում, ինչպես նաև ապահովում են, որ.*

*ա. հաշմանդամություն ունեցող անձանց մյուսների հետ հավասար հիմունքներով հնարավորություն ունենան ընտրելու իրենց բնակության վայրը, որտեղ և ում հետ են ապրելու, ստիպված չլինեն ապրել բնակության ինչ-որ պայմաններում,*

*բ. հաշմանդամություն ունեցող անձինք օգտվեն մի շարք ներտնային, բնակության հետ կապված և համայնքային աջակցության այլ ծառայություններից և ստանան համայնքում ապրելու և ներառվելու, ինչպես նաև համայնքից չմեկուսացվելու համար անհրաժեշտ անձնական աջակցություն,*

*գ. բնակչության համար նախատեսված համայնքային ծառայությունները և հնարավորությունները հավասարապես հասանելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց և համապատասխան են նրանց կարիքներին»:*

Այսինքն, մի կողմից հաշմանդամություն ունեցող անձանց համար պետք է հասանելի լինեն համայնքին հասանելի ծառայությունները և հնարավորությունները, մյուս կողմից՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար պետք է ապահովվեն լրացուցիչ ծառայություններ՝ ելնելով իրենց կարիքներից: Եվ վերջապես, այս ամենը պետք է իրականացվի՝ ապահովելով անձի՝ ապրելու վայրի ընտրության իրավունքը: Ապահովել ընտրության հնարավորություն, աջակցություն, ծառայությունների մատչելիություն. սա է Կոնվենցիայի 19-րդ հոդվածի թիրախը:

Այսպիսով, Կոնվենցիան ամրագրում է հաշմանդամություն ունեցող անձանց երկու տեսակի ծառայությունների և հնարավորությունների ապահովման անհրաժեշտությունը՝

1. Անհատականացված աջակցող ծառայություններ,
2. Ներառական համայնքային ծառայություններ:

## **Անհատականացված աջակցող ծառայություններ**

*բ. հաշմանդամություն ունեցող անձինք օգտվեն մի շարք ներտնային, բնակության հետ կապված և համայնքային աջակցության այլ ծառայություններից և ստանան համայնքում ապրելու և ներառվելու, ինչպես նաև համայնքից չմեկուսացվելու համար անհրաժեշտ անձնական աջակցություն:*

Կոնվենցիան պահանջում է, որպեսզի հաշմանդամություն ունեցող ամեն անձին հասանելի լինեն տարբեր ծառայություններ: Այսինքն, մի կողմից անհրաժեշտ է, որպեսզի այդ ծառայությունները գոյություն ունենան, մյուս կողմից՝ դրանք պետք է հասանելի լինեն հաշմանդամություն ունեցող ամեն անձի՝ անկախ նրա հաշմանդամության տեսակից, բնակության վայրից, սեռից, և այլն:

Այս ծառայությունների ապահովումը հետապնդում է երկու նպատակ. ապահովել, որպեսզի հաշմանդամություն ունեցող անձը.

1. Ստանա համայնքում ապրելու և ներառվելու հնարավորություն,
2. Չմեկուսացվի կամ չսեգրեգացվի համայնքից:

Ընդ որում, աջակցությունը պետք է տրամադրվի՝ հաշվի առնելով, որ ինչպես բոլորը, այնպես էլ հաշմանդամություն ունեցող անձինք պետք է հնարավորություն ունենան ընտրելու իրենց անհրաժեշտ ծառայությունը: Աջակցությունը կարող է օգնել անձին իր կյանքի տարբեր ոլորտներում՝ առանց բացառության: Աջակցության տրամադրման կարևորագույն հիմնաքարն է աջակցության անհրաժեշտությունը և անձի որոշման կայացման ազատությունը՝ ընտրության հնարավորությունը: Ամեն դեպքում, անձը պետք է որոշումներ կայացնի իր կյանքի վերաբերյալ, վերահսկի իր կյանքը և ընտրի այն աջակցության տեսակը, որը նա կստանա:

Կոնվենցիայի 19-րդ հոդվածի մեկնաբանություններում Կոմիտեն ուղղակի նշում է, որ նշված իրավունքը որևէ դեպքում չի կարող սահմանափակվել մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց համար:

**Կոնվենցիայի 19-րդ հոդվածի ընդհանուր բնույթի մեկնաբանություններ.**

*21. Անդամ պետությունները հաճախ հաստատությունները դիտարկում են որպես միակ լուծում հաշմանդամություն ունեցող այն անձանց համար, ովքեր ճանաչվել են անձնական ծառայությունների բարձր մակարդակի անհրաժեշտություն ունեցող, առավել ևս երբ անձնական ծառայությունները համարվում են «չափազանց թանկ», կամ հաշմանդամություն ունեցող անձը համարվում է անունակ ապրել հաստատության պայմաններից դուրս: Մտավոր հաշմանդամություն ունեցող անձինք, հատկապես հաղորդակցման համալիր պահանջներ ունեցող անձինք, ի լրումն այլի, հաճախ գնահատվում են որպես անունակ ապրել հաստատությունից դուրս: Նման հիմնավորումը հակասում է 19-րդ հոդվածին, որը ընդլայնում է անկախ ապրելու և համայնքում ներառվելու իրավունքի սահմանները այն հասանելի դարձնելով հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց համար, անկախ նրանց մտավոր կարողությունների աստիճանից, ինքնաապաստանի (self-functioning) և աջակցության պահանջներից:*

Նույնիսկ ներպետական օրենսդրության համաձայն, անձին անգործունակ ճանաչելը, կամ գործունակության սահմանափակումը չի կարող սահմանափակել անկախ ապրելու և համայնքում ներառված լինելու նրա իրավունքը:

*20. 19-րդ հոդվածը հստակորեն վերաբերում է հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց: Գործունակության ո՛չ ամբողջական, ո՛չ մասնակի սահմանափակումը, ո՛չ անհրաժեշտ աջակցության աստիճանը չի կարող վկայակոչվել որպես հաշմանդամություն ունեցող անձի անկախ լինելու և համայնքում անկախ ապրելու իրավունքի ապահովման ժխտման կամ սահմանափակման համար:*

Պետությունները երբեմն այս իրավունքի ապահովման բացերը հիմնավորում են նյութական բավարար միջոցների բացակայությամբ և, վկայակոչում են այն հանգամանքը, որ այս իրավունքը մեծ առումով պարունակում է տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների տարբեր, որոնք Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն կարող են կիրարկվել աստիճանաբար՝ պետությանը «հասանելի միջոցների առավելագույն չափով»: Սակայն անհրաժեշտ է հաշվի առնել, որ նույնիսկ այս դեպքում պետությունը պարտավոր է դրսևորել ողջամիտ զարգացում և տարեցտարի ապահովել իրավունքի ապահովման զարգացման ցուցանիշը՝ «նպատակ ունենալով աստիճանաբար հասնել այդ իրավունքների լիակատար իրականացմանը՝ չխախտելով սույն Կոնվենցիայով սահմանված պարտավորությունները, որոնք ենթակա են անհապաղ կատարման՝ միջազգային իրավունքի համաձայն»:

Այսպիսով, պետությունը հնարավորություն ունի հետաձգելու անձնական ծառայությունների չտրամադրման այն պարտականության կատարումը, որն անհրաժեշտ է անձի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների իրացմանը՝ այն կատարելով աստիճանաբար և ապահովելով զարգացման ցուցանիշ: Սակայն պետությունը պարտավոր է անհապաղ ապահովել անձնական ծառայությունների և աջակցման այն հնարավորությունները, որոնք անհրաժեշտ են քաղաքացիական և քաղաքական իրավունքների (օրինակ՝ արդար դատաքննության իրավունք, ընտանական իրավունքներ, հաշմանդամության հիմքով ազատության սահմանափակման արգելք, և այլն) իրացման համար:

Ինչ վերաբերում է համայնքապետական ծառայությունների ներդրմանը՝ ինստիտուցիոնալ ծառայությունների փոխարեն, որոշ հետազոտություններ վկայում են, որ ծախսերի իմաստով պետությունը ստիպված է լինելու լրացուցիչ ներդրումներ կատարել միայն ինստիտուցիոնալ ծառայությունից համայնքապետական ծառայությունների անցման ընթացքում: Սակայն անցման գործընթացի ավարտից հետո, երբ պետությունն այլևս ստիպված չէ պահպանել հաստատությունները, այն կարող է նույնիսկ խնայել: Իսկ այն դեպքում, երբ երկրում հաստատությունները չեն կրում համատարած բնույթ, լրացուցիչ ծախսերի մեղմացումը կարող է տեղի ունենալ հասարակությանը հասանելի ծառայությունները հաշմանդամություն ունեցող անձանց հասանելի դարձնելու միջոցով:

## **Ներառական համայնքային ծառայություններ**

*գ. բնակչության համար նախատեսված համայնքային ծառայությունները և հնարավորությունները հավասարապես հասանելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց և համապատասխանեն նրանց կարիքներին:*

Համայնքում ներառվելու կարևոր նախապայման է, որպեսզի համայնքն ընդունի հաշմանդամություն ունեցող անձին.

*32. Այս կետում նշված ծառայությունները և հաստատությունները ներդրված չեն հաշմանդամություն ունեցող անձանց համար, այլ այն ծառայություններն ու հնարավորություններն են, որոնք նախատեսված են ընդհանուր բնակչության համար: Դրանք ներառում են ծառայությունների լայն շրջանակ, ինչպիսին է բնակարանային ապահովումը, հանրային գրադարանները, հիվանդանոցները, դպրոցները, տրանսպորտը, խանութները, շուկաները, թանգարանները, համացանցը, սոցիալական մեդիան և նմանատիպ այլ հաստատություններ և ծառայություններ: Դրանք պետք է առկա լինեն, լինեն համընդհանուր մատչելի, ընդունելի և հարմարեցված համայնքում բնակվող հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց համար:*

Համայնքում առկա ծառայությունների մատչելիության ապահովումը, համայնքային ծառայությունների մատչելիության զարգացումը, ներառյալ՝ իրազեկվածության բարձրացման քայլերը, ապահովում են ինստիտուցիոնալացման գործընթացի կարևորագույն բաղադրիչներն են:

Ընդ որում, ծառայությունները պետք է մատչելի լինեն հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց համար՝ անկախ տարիքից, սեռից, բնակչության վայրից, և այլն:

Այսպես, օրինակ, պատշաճ բնակարան ունենալու իրավունքը նախատեսում է հնարավորություն ստեղծել անձի համար ապրել համայնքում, մյուսների հետ հավասար հիմունքներով: Բնակարանի իրավունքը ապահովված չի համարվի այն դեպքում, եթե այն

ապահովված լինի միայն հատուկ նախատեսված վայրերում, կազմակերպված լինի այն կերպ, որ անձինք ստիպված լինեն ապրել միևնույն շենքում, շինություններում կամ հարևանությամբ: Մատչելի բնակարանները պետք է հարմարեցված լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար, անկախ այն հանգամանքից, թե նրանք ապրում են միայնակ, թե ընտանիքի հետ միասին: Այն պետք է հասանելի լինի բավարար քանակությամբ հաշմանդամություն ունեցող անձանց ընտրության իրավունքը և հնարավորությունը ապահովելու նպատակով:

Որքան մատչելի լինեն ընդհանուր բնակության համար առկա ծառայությունները, այդքան քիչ կլինի առանձին անհատական ծառայությունների անհրաժեշտությունը:

*37. Երեխաների համար անկախ ապրելու և համայնքում ներառված լինելու իրավունքի կորիզը ընտանիքում ապրելու իրավունքն է:*

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեն առանձնացնում է 19-րդ հոդվածի հետևյալ հիմնական բաղադրիչները, որոնք պետք է ապահովվեն պետության կողմից, մասնավորապես նաև ֆինանսական և տնտեսական ճգնաժամի ընթացքում:

*ա) անձի գործունակության իրավունքի ապահովումը, որպեսզի նա կարողանա որոշում կայացնել թե որտեղ, ում հետ և ինչպես պետք է ինքը ապրի;*

*բ) երաշխավորել խտրականության բացառումը բնակարանի մատչելիության հարցում, ներառյալ հաշվի առնելով եկամուտը և մատչելիությունը, ընդունելով պարտադիր շինարարական կանոններ որոնք կպահանջեն, որպեսզի նոր և վերանորոգված բնակարանները դառնան մատչելի;*

*գ) մշակել համայնքում հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու հստակ գործողությունների ծրագիր, ներառյալ քայլեր ձեռնարկելով համայնքում ապրելու համար ֆորմալ աջակցության կազմակերպման ուղղությամբ, որպեսզի ոչ պաշտոնական աջակցություն, օրինակ, ընտանիքների կողմից չլինի միակ տարբերակը;*

*դ) զարգացնել, կիրարկել հիմնական համընդհանուր ծառայությունների մատչելիության պահանջներ սահմանող օրենսդրություն, ծրագրեր և ուղեցույցներ, իրականացնել վերահսկողություն դրանց իրականացման և պատասխանատվության ենթարկել խախտման համար, հասարակությունում հավասարության, ներառյալ հաշմանդամություն ունեցող անձանց՝ սոցիալական մեղիայից օգտվելու հնարավորության ապահովման նպատակով, ապահովելով տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների ոլորտում բավարար կարողություններ ունեցող մասնագետների առկայությունը, որպեսզի երաշխավորվի նմանատիպ տեխնոլոգիաների մշակումը համընդհանուր դիզայնի սկզբունքի հիման վրա և պաշտպանությունը,*

*ե) մշակել հստակ գործողությունների ծրագիր և քայլեր ձեռնարկել հիմնական, անձնավորված, անհատական, իրավահեն, մասնավորապես տվյալ տեսակի հաշմանդամություն ունեցող անձանց համար աջակցության ծառայություններ և ծառայության այլ տեսակների ապահովման նպատակով;*

*զ) երաշխավորել հետընթացի բացառումը 19-րդ հոդվածի իրականացման ընթացքում, բացառությամբ այն դեպքի, երբ դա պատշաճ կերպով հիմնավորվել է միջազգային իրավունքին համապատասխան;*

*է) հավաքագրել կայուն քանակական և որակական տվյալներ հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ, ներառյալ այն անձանց վերաբերյալ, ովքեր դեռևս բնակվում են հաստատությունում;*

*ը) օգտագործել հասանելի ֆինանսավորումը, ներառյալ տարածաշրջանային ֆինանսավորումը, զարգացման համագործակցության ֆինանսավորումը անկախ ապրելու ներառական և մատչելի ծառայությունների զարգացման նպատակով:*

## **Պետության պարտավորությունները**

Անկախ ապրելու և համայնքում ապրելու իրավունքի ապահովման շրջանակներում պետությունը պարտավոր է հարգել, պաշտպանել և իրացնել այն:

Մասնավորապես, պետությունը պարտավոր է բացառել իրավունքի որևէ սահմանափակումը իր գործակալների միջոցով: Այն չպետք է սահմանափակի որևէ մեկի անկախ ապրելու իրավունքը օրենքների միջոցով, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով սահմանափակում են անձի՝ բնակության վայրն ընտրելու իրավունքը, այն, թե ում հետ ապրեն, նրանց ինքնուրույնությունը: Պետությունը ոչ միայն չպետք է ընդունի նման օրենքներ, կարգավորումներ, այլ չպետք է կիրարկի նման օրենսդրությունը: Դա նաև պարտավորեցնում է պետությանը՝ չսահմանափակել հաշմանդամություն ունեցող անձի ազատությունը՝ հիմք ընդունելով նրա հաշմանդամությունը (օրինակ՝ անձանց, ովքեր իրենց կամքին հակառակ տեղավորվում են հոգեբուժական ծառայություններ մատուցող հիմնարկներում իրենց մտավոր կան հոգեկան առողջության պատճառով): Այն արգելում է խնամակալության բոլոր միջոցները և պահանջում փոխարինել անձի փոխարեն որոշումների կայացման մեխանիզմը աջակցության միջոցով որոշումների կայացման մեխանիզմով:

Այսինքն, սույն իրավունքի ապահովումն առաջին հերթին պահանջում է անձին հաստատություններում տեղավորելու բացառումը, և հաստատությունում տեղավորված անձանց համայնք վերադարձնելու անհրաժեշտությունը:

Իրավունքը պաշտպանելու նպատակով պետությունները պետք է ընդունեն օրենսդրական կարգավորումներ և քաղաքականություններ, որոնք կարգելեն ընտանիքի անդամների, երրորդ անձանց, աջակցող ծառայություններ մատուցողների, ընդհանուր բնակչությանը ծառայություններ մատուցողների այնպիսի վարքագիծը, որը կսահմանափակի անձի ներառվելու և համայնքում անկախ ապրելու իրավունքը: Պետությունը պետք է համոզված լինի, որ հանրային և մասնավոր աղբյուրներից ֆինանսական միջոցները չեն ծախսվի որևէ տեսակի հաստատությունների կառուցման, պահպանման, վերանորոգման կամ մշակման վրա: Պետությունը պետք է ապահովի, որ ցանկացած տեսակի աջակցությունը հիմնված լինի անձի պահանջումների, այլ ոչ ՝ ծառայություններ մատուցողի հետաքրքրությունների վրա: Պետությունը պետք է արգելի, որպեսզի հաստատությունների տնօրենները/կառավարիչները դառնան հաստատության բնակիչների խնամակալներ:

Այսպիսով, անհրաժեշտ է ապահովել, մշակել և խրախուսել օրենսդրություն, վարչական, բյուջետային, դատական, ծրագրային և խրախուսման միջոցառումներ, ինչը կապահովի անկախ ապրելու և համայնքում ներառվելու իրավունքի իրացումը: Այս ամենը իրականացնելիս պետությունը պարտավոր է սերտորեն խորհրդակցել և ակտիվորեն ներգրավել հաշմանդամություն ունեցող անձանց, նրանց ներկայացնող կազմակերպությունների միջոցով, մասնավորապես՝ աջակցության ծառայությունների մշակման և համայնքում աջակցող ծառայություններին ներդրումներ կատարելու դեպքում:

## **Ներպետական կարգավորումները**

Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող ունեցող անձանց իրավունքները կարգավորվում են ինչպես ընդհանուր բնույթի օրենսդրությամբ, այնպես էլ՝ հաշմանդամություն ունեցող անձանց և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքները, սոցիալական աջակցության երաշխիքները կարգավորող հատուկ օրենսդրական կարգավորումներով:

Հայաստանում հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող ունեցող անձինք, որպես կանոն, բնակվում են կամ հաստատություններում կամ իրենց ընտանիքներում:

ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է մարդու արժանապատվությունը՝ որպես գերագույն արժեք: Սահմանադրությամբ ամրագրված է նաև խտրականության արգելքը՝ ներառյալ հաշմանդամության հիմքով, այսինքն՝ գործում է խտրականության արգելքը հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ և տարբեր հաշմանդամություն ունեցող անձանց միջև:

Սահմանադրությամբ ամրագրված է նաև յուրաքանչյուր անձի ֆիզիկական և հոգեկան առողջության իրավունքը, որը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Միևնույն ժամանակ, ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է հոգեկան առողջության խնդիր ունենալու դեպքում անձի իրավունքների սահմանափակման հնարավորություն: Սահմանափակման կարող է ենթարկվել ազատության իրավունքը:

ՀՀ Սահմանադրության կարգավորումները թույլ են տալիս հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի մի շարք իրավունքների սահմանափակումները՝ գործունակության սահմանափակման հիմքով:

Այսպես, ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև՝ հանրաքվեին մասնակցելու իրավունք չունեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված անձինք:

ՀՀ Սահմանադրությունը նաև նախատեսում է գործունակությունից զրկված անձի աշխատանքային, պայմանագրային, ամուսնական և այլ իրավունքները:

ՀՀ Սահմանադրությունը նախատեսում է հոգեկան առողջության խնդիրների հիմքով մի շարք պաշտոնների զբաղեցման արգելքը:

Հոգեկան առողջության ոլորտը կարգավորվում է նաև «Հոգեբուժական օգնության մասին» օրենքով, որն ընդունվել է 2004թ.: Օրենքը կարգավորում է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքները, հոգեբուժական օգնության և սոցիալական ապահովության պահպանման երաշխիքները, և այլն: 2018թ. հունիսին հանրային քննարկման ներկայացվեց «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Ըստ մշակողի՝ ՀՀ առողջապահության նախարարության, նախագիծը կոչված է կարգավորել հոգեբուժական օգնության ամբողջ ոլորտը՝ սահմանելով ոչ միայն հոգեբուժական կազմակերպություններում բուժում ստացող անձանց իրավունքները, այլ նաև հոգեբուժական կազմակերպություններում բուժում չստացող անձանց իրավունքները: Ընդհանուր առմամբ, օրենքի նախագիծը կոչված է հոգեկան առողջության պահպանման ոլորտում կարգավորումները համապատասխանեցնել Կոնվենցիային: Այնուամենայնիվ, օրենքի նախագծի կարգավորումները ոչ ամբողջությամբ են արտացոլում Կոնվենցիայի կարևորագույն չափորոշիչները: Այսպես, օրենքի նախագիծը դեռևս նախատեսում է անգործունակ ճանաչված լինելու հիմքով անձի իրավունքների սահմանափակում:

Հաշմանդամ ճանաչված անձանց իրավունքները կարգավորվում են նաև «ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով:

Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող ծառայությունների տրամադրման կարգը և պայմանները կարգավորվում են «Մոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով: Օրենքով սահմանվում են սոցիալական աջակցության հետևյալ ձևերը. խորհրդատվական օգնությունը, վերականգնողական օգնությունը, բնափրային օգնությունը, կացարանով ապահովելը, խնամքը, իրավական օգնությունը, օրենքով սահմանված կենսաթոշակներ, նպաստներ և այլ դրամական վճարներ նշանակելը և վճարելը, օրենքով սահմանված զբաղվածության ծառայությունները և բժշկասոցիալական փորձաքննության բնագավառում ծառայությունները: Ինչպես նաև՝ օրենքով չարգելված այլ ծառայությունները:

Թեև օրենքը չի արգելում հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց վերը նշված ցանկից բոլոր ծառայությունների տրամադրումը, սակայն նաև չի նախատեսում դրանց տրամադրումը և պայմանները մատչելի դարձնել նաև հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Ըստ Օրենքի տրամաբանության՝ հոգեւոցիալական և մտավոր հաշմանցամություն ունեցող անձանց տրամադրվող ծառայության հիմնական տեսակն է խնամքը: Խնամքը անձանց իրենց հարազատ սոցիալական միջավայրում հնարավորինս երկար պահելու կամ հասարակությունում ներառելու նպատակով անհրաժեշտ օգնությունն է:

Խնամքը տրամադրվում է՝ տնային պայմաններում, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում, սոցիալական հոգածության ցերեկային կենտրոններում, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում, հոսպիսներում (հիվանդությունների զարգացման վերջին փուլում գտնվող անձանց պալիատիվ (ամոքիչ) բժշկական օգնություն ցուցաբերող կազմակերպություն), բազմապրոֆիլ ծառայություններ տրամադրող, այլ կազմակերպություններում, կենտրոններում, հիմնարկներում, խնամատար ընտանիքներում: Բնակչության սոցիալական պաշտպանության հատուկ (մասնագիտացված) հատուկ հաստատություններում տրամադրվում է խնամք 18 տարին լրացած քրոնիկ հոգեկան հիվանդությամբ կամ խոր մտավոր հետամնացությամբ հաշմանդամություն ունեցող անձանց կամ ծերունական փսիխոզով կամ ծանր արտահայտված սկլերոզով անձանց համար:

Օրենքով սահմանված է, որ տնային պայմաններում խնամքը, սոցիալական հոգածության ցերեկային կենտրոններում տրամադրվում է հաշմանդամություն ունեցող անձանց՝ համապատասխանաբար տարեց, չաշխատող (բացառությամբ տնային պայմաններում աշխատող) անձանց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց՝ նրանց անհատական սոցիալական ծրագրի համաձայն ու տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց, ինչպես նաև երեխաներին:

Սակայն ՀՀ կառավարության՝ «Երեխաների, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգը և պայմանները սահմանելու, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կրոցրած ճանաչելու մասին 2015թ. սեպտեմբերի 25-ի թիվ 1112-Ն» որոշմամբ որպես տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրումը մերժելու հիմք է սահմանված հոգեկան խանգարումներ ունենալը: Խնամքի միակ տեսակը, որից կարող են օգտվել «հոգեկան խանգարումներ» ունեցող անձինք՝ խնամքն է հատուկ (մասնագիտացված) հաստատություններում:

«Սոցիալական աջակցության» մասին ՀՀ օրենքը սահմանափակում է անչափահաս և անգործունակ անձանց համար սոցիալական պատրոնաժի սահմանման հնարավորությունը:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացման և ապահովման գործընթացը զարգացնելու նպատակով յուրաքանչյուր տարի ընդունվում է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության, իսկ 2018թ.-ից՝ սոցիալական ներառման տարեկան ծրագիր:

Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2019թ. տարեկան ծրագրով նախատեսվող միջոցառումների ցանկը ներառում է միջոցառումներ՝ ուղղված համայնքային ծառայությունների ներառականության ապահովմանը կրթության, զբաղվածության, առողջապահության ոլորտներում, ինչպես նաև՝ ներառական անհատականացված աջակցող ծառայությունների ներդրմանը:

Ծրագրով նախատեսված մի շարք միջոցառումներով նախատեսված է ստեղծել հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց և աուտիզմ ունեցող անձանց համար սոցիալական ծառայությունների տրամադրմանն ուղղված ծառայություններ:

Միայն աուտիզմ ունեցող անձանց համար, որպես գործողության արդյունք, սահմանված է հնարավոր զբաղվածության և սոցիալական ներառման ապահովումը: Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ծառայությունների տրամադրման արդյունք սահմանված չէ:

Ծրագրով նախատեսված այն միջոցառումները, որոնք ուղղված են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովմանը և պաշտպանությանը, ազդեցություն պետք է ունենան նաև հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վրա: Սակայն պարզ չէ, թե ինչպիսին կլինի այդ ազդեցությունը, քանի որ համապատասխան միջոցառումների «Ակնկալվող արդյունք» սյունակում նման ցուցանիշներ նշված չեն:

Ծրագրով նախատեսված է նաև իրականացնել բարեփոխումներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքի ապահովման ուղղությամբ: Սակայն նախատեսված չէ միջոցառում, մասնավորապես, հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքի ապահովման ուղղությամբ: Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները հաճախ կարող են չարաշահվել՝ նրանց թույլ չտալով կատարել ինքնուրույն ընտրություն, մի կողմից՝ նրանց բավարար չափով ընտրելու ունակ չհամարելով, մյուս կողմից՝ նրանց անգործունակ ճանաչված լինելու հիմքով:

Ըստ ՀՀ Սահմանադրության, անգործունակ ճանաչված անձինք իրավունք չունեն ընտրելու և ընտրվելու: Թեև գործնականում անգործունակ ճանաչված անձանց տվյալները չեն հանվում ընտրական ցուցակներից և նրանք փաստացի կարող են մասնակցել ընտրություններին: Այն դեպքում, երբ մտավոր կամ հոգեւոցիալական հաշմանդամություն ունեցող անձանց, այնուամենայնիվ, «տանում են» ընտրատեղամաս, որպեսզի նրանք մասնակցեն քվեարկությանը, ըստ որոշ վկայությունների, մեծ է վտանգը, որ նրանց փաստացի հնարավորություն չի տրվի կատարել ինքնուրույն ընտրություն և փորձ կկատարվի քվեարկել նրանց փոխարեն:

### **Ինստիտուցիոնալ ծառայություններին այլընտրանքային՝ համայնքապետական ծառայությունների ներդրման ընթացքը**

2010թ. Հայաստանը վավերացրել է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան:

Կոնվենցիայի վավերացմամբ Հայաստանը ստանձնեց կարևոր պարտավորություններ նաև հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում:

2011թ.-ից ՀՀ կառավարության և հասարակական կազմակերպությունների նախաձեռնությամբ մեկնարկեց հոգեկան առողջության ոլորտում ինստիտուցիոնալ ծառայություններին այլընտրանք համայնքահեն ծառայությունների ներդրման ռազմավարության մշակման գործընթացը: Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայությունների տրամադրման հայեցակարգը ընդունվեց 2013թ. մայիսին, իսկ նույն թվականի սեպտեմբերին հաստատվեց հայեցակարգի իրականացման միջոցառումների 2013-2017թթ. ծրագիրը:

2015թ. սեպտեմբերին հաստատվեց Երեխաների, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգը և պայմանները սահմանելու, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը: Փաստաթղթով սահմանվել է «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված սոցիալական աջակցության մի շարք տեսակների տրամադրման կարգը, սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի, հատուկ (մասնագիտացված), խնամքի գիշերօթիկ հաստատություններում ու սոցիալական հոգաձության ցերեկային կենտրոններում երեխաներին, իսկ հաշմանդամություն ունեցող անձանց և տարեց անձանց նաև տնային պայմաններում խնամքի տրամադրման կարգը:

Մինևնույն ժամանակ, կարգով սահմանափակվում է «հոգեկան խանգարումներ ունեցող անձանց», կարգով սահմանված խնամքի որևէ տեսակի տրամադրման հնարավորությունը բացառությամբ բնակչության սոցիալական պաշտպանության հատուկ (մասնագիտացված) հաստատություն ընդունվելու դեպքերի: Այսինքն, կարգը չի նախատեսում հոգեսոցիալական հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում կամ սոցիալական հոգաձության ցերեկային կենտրոններում խնամքի տրամադրման հնարավորությունը:

Կարգով նաև սահմանվեց, որ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված՝ բնակչության սոցիալական պաշտպանության այլ տիպերի հաստատություններում (շուրջօրյա խնամքի տներ, սատարող կացարաններ, համայնքային ցերեկային կենտրոններ, և այլն) հոգեկան առողջության խնդիրներ ունեցող տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման հետ կապված հարաբերությունների առանձնահատկությունները կարգավորվում են ՀՀ կառավարության որոշումներով, նշված հաստատություններում խնամքի տրամադրման հետ կապված հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերով:

2015թ. դեկտեմբերին հաստատվեց շուրջօրյա խնամքի տներում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայությունների տրամադրման կարգը:

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայությունների տրամադրման հայեցակարգի իրականացման միջոցառումների ծրագրով, ի թիվս այլ գործողությունների, նախատեսված էր նաև մշակել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համայնքային ծառայությունների տրամադրման փորձնական ծրագիր:

Ծրագրի շրջանակներում մշակվեց «Մպիտակի խնամքի տուն» այլընտրանքային խնամքի տան ներդրման ծրագիրը: Մպիտակի խնամքի տունը գործարկվեց 2016թ. մայիսից:

Այն լրացրեց հոգեսոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց համար Հայաստանում գործող հատուկ տիպի ոչ պետական հաստատությունների ցանկը, ի լրումն «Ջերմիկ անկյուն»-ի և պետական երկու հաստատությունների՝ Վարդենիսի տուն-ինտերնատի և «Ձորակ» խնամքի կենտրոնի: Մպիտակի խնամքի տունը ձևավորեց համայնքին և ընտանիքին առավել մոտ պայմաններում խնամքի և բնակության փորձ:

2014թ. ընդունվեց նաև ՀՀ-ում հոգեկան առողջության պահպանման և բարելավման 2014-2019 թվականների ռազմավարությանը և դրա կատարումն ապահովող միջոցառումների ցանկը: Թեև այս միջոցառումների ծրագրով չնախատեսվեց հոգեբուժական ծառայությունների և հոգեւոցիալական ու մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող ծառայությունների ոլորտում համընդհանուր համայնքահեն մոտեցումների ներդրում, սակայն նախատեսվեց փորձնական ծրագրի իրականացում. ՀՀ երկու համայնքում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար ստեղծել շուրջօրյա խնամքի տուն՝ որպես այլընտրանք Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատի: Մա, ըստ էության, կրկնում էր 2013թ. Ռազմավարությամբ և միջոցառումների ծրագրով նախատեսվող միջոցառումը:

Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց անկախ կյանքի ապահովման և համայնքային ծառայությունների ներդրմանն ուղղված միջոցառումներ նախատեսվեցին նաև Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2014-2016թթ. և 2017-2019թթ. գործողությունների ծրագրերով:

Նշված գործողություններից կարևորագույնը, որը պետք է իրականացվեր դեռևս 2016թ.՝ անձին անգործունակ ճանաչելու հիմքերի հստակեցումը (որի սահմանումը թեև ինքնին չի համապատասխանում Կոնվենցիայի պահանջներին), չի իրականացվել:

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019թթ. գործողությունների ծրագրի 8-րդ կետով հաստատվեց ՀՀ-ում հոգեկան առողջության ոլորտում բժշկական և խնամքի ծառայություններ տրամադրող կազմակերպություններում՝ ծառայությունների որակի և մարդու իրավունքների պաշտպանության վիճակի նկատմամբ հասարակական վերահսկողության ապահովման նպատակով մշտադիտարկման խմբի ձևավորման ուղղությամբ մշակված կարգը:

Կարգը, ի թիվս այլ պահանջների, սահմանում է, որ խմբում ընդգրկվելու հավակնություն ունեցող անձը պետք է ներկայացնի եզրակացություն հոգեկան առողջության վերաբերյալ, համաձայն որի՝ անձը հոգեպես առողջ է կամ ՀՀ-ում գործող հիվանդությունների և առողջության հետ կապված խնդիրների վիճակագրական դասակարգչում ընդգրկված հոգեկան և վարքային խանգարում ունենալու դեպքում գտնվում է կայուն հոգեկան վիճակում: Նման կարգավորումը կարող է բացառել հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց՝ խմբում ներառվելու հնարավորությունը:

Որպես տնային պայմաններին առավել մոտ և/կամ համայնքահեն ծառայությունների առավել համապատասխան փորձ է նաև 2008թ. «Ձերմիկ անկյուն» հիմնադրամի խմբային տունը, ինչպես նաև՝ «Հոգեկան առողջության հիմնադրամի» կողմից տրամադրվող հոգեկան առողջության երկարատև խնդիրներ ունեցող անձանց հոգեւոցիալական վերականգնումը (Բնթրա կենտրոն):

Նշված կազմակերպությունները չեն գտնվում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո, սակայն կարող են ստանալ պետական աջակցություն: ՀՀ կառավարության թիվ 1112-Ն որոշման համաձայն՝ 2017թ. հունվարի 1-ից երեխաներին, տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց խնամք տրամադրող՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո չգտնվող կազմակերպությունները պետական աջակցությամբ իրականացվող ծրագրերում կարող են ընդգրկվել և (կամ) սոցիալական աջակցության բնագավառում ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի հետ համագործակցության շրջանակներում՝ սոցիալական ոլորտում իրականացվող ծրագրերին մասնակցել միայն «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով հավաստագրվելու դեպքում: Մյուս դեպքերում «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ կազմակերպությունները կամ

Ֆիզիկական անձինք սոցիալական ծառայությունները տրամադրում են նույն օրենքով սահմանված՝ սոցիալական ծառայությունների տրամադրման նպատակներին և հիմնական սկզբունքներին համապատասխան:

Այսինքն, սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների և ֆիզիկական անձանց գործունեության հավաստագրման համակարգ չի գործում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ ծառայությունները տրամադրվում են պետական աջակցությամբ:

2016թ. փետրվարից իրականացվում է համընդհանուր ներառական կրթության ներդրումը ՀՀ-ում: Ծրագրի շրջանակներում իրականացվում է հանրապետական և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների ձևավորում: Տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնների նպատակը իրենց սպասարկման տարածքի ուսումնական հաստատություններում սովորողների կրթության կազմակերպմանը և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներառմանն աջակցելն է: Մանկավարժահոգեբանական կենտրոններում նեղ մասնագիտացված ծառայություններ են մատուցվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող այն անձանց, նաև աջակցություն է տրամադրվում տնային պայմաններում ուսուցման կազմակերպմանը:

ՀՀ կառավարության կողմից 2016թ.-ից իրականացվում է ՀՀ-ում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների համակարգի զարգացման հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ծրագիրը: Միջոցառումների ծրագրով չի նախատեսվում հատուկ գործողություններ մտավոր կամ հոգեւոցիալական հաշմանդամություն ունեցող երեխաների համար այլընտրանքային ծառայությունների ներդրման, ինչպես նաև՝ հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաների համար նախատեսված հատուկ հաստատությունների վերակազմակերպման վերաբերյալ:

2017-2018թթ. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի երեխաների խնամքի 3 գիշերօթիկ հաստատություններ վերակազմակերպվել են երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնների: Վերակազմակերպման ընթացքում են նաև գործող մյուս գիշերօթիկ հաստատությունները:

Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնների հիմնական նպատակը կազմակերպության սպասարկման տարածքում երեխաներ ունեցող ընտանիքների՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու կանխարգելումը և (կամ) կյանքի դժվարին իրավիճակից դուրսբերումն է, այդ թվում՝ թե՛ կազմակերպությունում ցերեկային ժամերին՝ կազմակերպության ներքին իրավական ակտերով սահմանված ժամանակահատվածում, և թե՛ կազմակերպությունից դուրս՝ արտակենտրոն ծառայությունների միջոցով, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ հաշմանդամություն ունեցող 3-18 տարեկան երեխաներին խնամքի տրամադրումը, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 3-18 տարեկան երեխաների՝ ընտանիքում ապրելու և դաստիարակվելու իրավունքի իրականացմանն աջակցությունը, ընտանեկան բռնության ենթարկված անձանց և նրանց ընտանիքի անդամներին աջակցությունը: Կենտրոնները կազմակերպում են սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավարժական և սոցիալ-իրավական բնույթի սոցիալական ծառայությունների տրամադրումը:

Կենտրոնները, ելնելով N 1112-Ն որոշման կարգավորումներից, ծառայություններ չեն տրամադրում հոգեկան խանգարումներ ունեցող անձանց: Պարզ չէ, թե արդյոք նրանք

տրամադրում են ծառայություններ 3-18 տարեկան հոգեւոցիալական կամ մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց:

Նշված թե՛ մանկավարժահոգեբանական աջակցության, թե՛ երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնները կարող են դառնալ հենք և ռեսուրս՝ համայնքում բնակվող հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ծառայությունների մատուցման համար:

## **Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ծառայություններ մատուցող կազմակերպությունները ՀՀ-ում**

### **Պետական կազմակերպություններ**

**Կազմակերպության անվանումը.** «Ակադեմիկոս Ա. Պ. Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն» ՓԲԸ

**Հասցե.** Արարատի մարզ, գ. Արմաշ, Մ. Նիկողոսյան 12

**Հեռախոս.** (0234) 6 21 93, 6 03 99

**Էլ. փոստ.** armashak@mail.ru

**Կազմակերպության տեսակը.** պետական

**Կազմակերպության կազմակերպչի անվանումը.** ՓԲԸ

**Կազմակերպության ենթակայությունը.** ՀՀ Արարատի մարզպետարան

**Կազմակերպությունը հիմնադրվել է** 1953 թվականին, սակայն հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ծառայություններ է մատուցում 2001թ.-ից: Կազմակերպությունը սպասարկում է ԱԱՊ երեք գյուղերի, Արմաշ, Երասխ. Պ. Սևակ՝ Տիգրանաշեն թաղամասով:

**Կազմակերպության առաքելությունը/նպատակը.** տրամադրել երկարատև խնամք և բժշկական աջակցություն (բուժում) քրոնիկ հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց:

**Թիրախ խումբը.** բոլոր տարիքային խմբերի հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձինք:

Կազմակերպության ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ պայման չէ հաշմանդամության կարգ ունենալը:

Կազմակերպության կողմից տրամադրվող բոլոր ծառայություններն անվճար են:

**Տրանսպորտային հաղորդակցությունը.** կազմակերպություն կարելի է հասնել «Երևան-Երասխավան» ավտոբուսի միջոցով:

Կազմակերպությունը չի փոխհատուցում թիրախ խմբի ճանապարհածախսը, չի ապահովում տրանսպորտային տեղաշարժը:

**2015-2017թթ. ընթացքում սպասարկված անձանց ընդհանուր թիվը.** 289 անձ:

**2017թ. ընթացքում սպասարկված անձանց ընդհանուր թիվը.** 152 անձ:

Կազմակերպությունն ունի մանկական (0-18) հոգեբուժական ենթաբաժանմունքում 8 մահճակալ:

**Կազմակերպության բոլոր աշխատակիցները, բացի կրտսեր բուժանձնակազմից, ունեն մասնագիտական կրթություն:**

Ավագ և միջին բուժանձնակազմի աշխատողներն անցել են վերապատրաստում և ունեն որակավորում:

**Կազմակերպության ծառայություններն ուղղված են հիվանդությունների միջազգային 10-րդ վերանայված դասակարգչով սահմանված հոգեկան և վարքի խանգարումների հետևյալ տեսակներին.**

1. Օրգանական, ներառյալ սիմպտոմատիկ, հոգեկան խանգարումներ
2. Հոգեկան և վարքային խանգարումներ՝ հոգեակտիվ նյութերի գործածման հետևանքով
3. Շիզոֆրենիա, շիզոտիպային և զառանցանքային խանգարումներ
4. Մտավոր հետամնացություն

**Կազմակերպությունն իրականացնում է հիվանդանոցային հոգեբուժական օգնություն և սպասարկում.**

1. Հիվանդանոցային հետազոտություն և բուժում
2. Հոգեկան առողջության վերականգնում

**Կազմակերպությունը մատուցում է հետևյալ ծառայությունները.**

1. Խրոնիկ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց բուժում և երկարատև խնամք:
2. Շուրջօրյա խնամք՝ կազմակերպության տարածքում:
3. Սոցիալական աշխատողի կողմից ծառայության տրամադրում, որը ենթադրում է աջակցել փորձաքննության ժամկետների, անձնագրային ժամկետների հետ կապված խոչընդոտների հաղթահարման առումով:
4. Բժշկական խորհրդատվություն:
5. Հոգեբանական անհատական դասընթացներ:
6. Արտթերապիա:
7. Ընտանկան թերապիա:

**Կազմակերպությունն իրականացնում է նաև բժշկասոցիալական փորձաքննություն:**

**Կազմակերպության անվանումը.** «Ավան հոգեկան առողջության կենտրոն»

**Հասցե.** ք. Երևան, Աճառյան փող., 1-ին նրբ., տ. 21

**Հեռախոս.** (060) 28 01 01

**Կայք.** www.ahak-center.com

**Էլ. փոստ.** mpcavanclinic@mail.ru

**Ֆեյսբուքյան էջ.** <https://www.facebook.com/avan.clinic/>

**Կազմակերպության տեսակը.** պետական

**Կազմակերպության կազմակերպչաիրավական ձևը.** ՓԲԸ

**Կազմակերպության ենթակայությունը.** ՀՀ Առողջապահության նախարարություն

**Կազմակերպությունը հիմնադրվել է** 1971 թվականին:

**Կազմակերպության առաքելությունը/նպատակը.** հոգեբուժական օգնություն տրամադրել հոգեկան խանգարում ունեցող անձանց:

**Կազմակերպության տեսլականը.** բարձրացնել մատուցվող հոգեբուժական բժշկական օգնության և սպասարկման որակը և արդյունավետությունը, ինչպես նաև ապահովել «Ավան հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ ֆինանսական կայունությունը:

**Կազմակերպության տեսլականը.** նպաստել մտավոր և հոգեւոցիալական հաշմանդամություն ունեցող անձանց ներառմանը հասարակություն՝ այլընտրանքային ծառայությունների տրամադրմամբ:

**Թիրախ խումբը.** 2-18 տարիքային խմբի մտավոր և հոգեւոցիալական հաշմանդամություն ունեցող անձինք:

Կազմակերպության ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ պայման չէ հաշմանդամության կարգ ունենալը:

Կազմակերպության կողմից տրամադրվող բոլոր ծառայություններն անվճար են:

**Ծառայությունների մատուցման վայրը.** կազմակերպության տարածք (Բարայեյյան 3)

**Տրանսպորտային հաղորդակցությունը.** կազմակերպությունը գտնվում է այնպիսի վայրում, որտեղ եկող մի շարք երթուղայիններ կան, սակայն խնդիրն այն է, որ դրանք հարամարեցված չեն հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց կարիքներին:

Կազմակերպությունը չի փոխհատուցում թիրախ խմբի ճանապարհաձախսը, չի ապահովում տրանսպորտային տեղաշարժը:

**2018 թ. ընթացքում սպասարկված անձանց ընդհանուր թիվը.** 57 անձ:

**Կազմակերպության բոլոր աշխատակիցներն ունեն մասնագիտական կրթություն:**

**Կազմակերպության ծառայություններն ուղղված են հիվանդությունների միջազգային 10-րդ վերանայված դասակարգչով սահմանված հոգեկան և վարքի խանգարումների հետևյալ տեսակներին.**

1. Օրգանական, ներառյալ սիմպտոմատիկ, հոգեկան խանգարումներ
2. Հոգեկան և վարքային խանգարումներ՝ հոգեակտիվ նյութերի գործածման հետևանքով:

3. Շիզոֆրենիա, շիզոտիպային և զառանցանքային խանգարումներ
4. Տրամադրության (աֆեկտիվ) խանգարումներ
5. Ներոտիկ, սթրեսով պայմանավորված և սոմատոֆորմ խանգարումներ
6. Վարքային համախտանիշներ՝ պայմանավորված ֆիզիոլոգիական խանգարումներով և ֆիզիկական գործոններով
7. Ստավոր հետամնացություն
8. Հոգեբանական զարգացման խանգարումներ
9. Վարքային և հուզական խանգարումներ՝ սովորաբար մանկական և դեռահասության տարիքում սկսվող
10. Հոգեկան խանգարում՝ չճշտված

**Կազմակերպությունը տրամադրում է.**

1. Հոգեբուժական օգնություն և սպասարկում
2. Հոգեթերապևտիկ օգնություն և սպասարկում

**Կազմակերպությունը մատուցում է հետևյալ ծառայությունները.**

1. **Կրթական ծառայություններ.** հատուկ մանկավարժն աշխատանքներ է իրականացնում երեխաների հիշողության, ընկալման, կենտրոնացվածության բարելավման ուղղությամբ:
2. **Ֆինանսական խորհրդատվություն,** որը տրամադրվում է սոցիալական աշխատողի կողմից՝ ըստ կարիքի:
3. **Բժշկական խորհրդատվություն,** որն իրականացվում է հոգեբույժի կողմից, սակայն ըստ կարիքի՝ հրավիրվում են նաև այլ մասնագետներ: Տարաբնույթ դասընթացներ են կազմակերպվում, որոնցում օր.՝ սեքսուոլոգը ծնողներին տրամադրել է գիտելիքներ՝ երեխաների սեռական զարգացման առանձնահատկությունների վերաբերյալ:
4. **Հոգեբանական խորհրդատվություն.** իրականացվում են անհատական աշխատանքներ՝ հոգեբանի կողմից:
5. **Մասնագիտական խորհրդատվություն աշխատաշուկայում առկա իրավիճակի վերաբերյալ.** իրականացվում է սոցիալական աշխատողի կողմից՝ ըստ կարիքի:
6. **Դրամական օժանդակություն.** կազմակերպվում է դրամահավաք՝ ըստ կարիքի:
7. **Անբաժեշտ ծառայություն ստանալու համար ուղղորդում, միջնորդություն և աջակցություն:**
8. **Արվեստի միջոցով թերապիա.** կավագործության, նկարչության, ձեռքի աշխատանքների, պարի խմբակների միջոցով իրականացվում է թերապևտիկ միջամտություն: Օրինակ՝ պարային թերապիայի միջոցով երեխաները հնարավորություն են ստանում արտահայտել իրենց զգացմունքները, զգալ իրենց մարմինը և դեկավարել շարժումները: Պարը օգնում է վերահաստատել կապը մարմնի, մտքի և հույզերի միջև՝ նպաստելով երեխայի ինքնավստահության ձեռքբերմանն ու սոցիալիզացման գործընթացին:
9. **Մշակութային միջոցառումներ.** թատրոն, կինո հաճախելու համար շահառուներին և նրանց ծնողներին տոմսերի տրամադրում:
10. **Ավագաթերապիա,** որն իրականացվում է հոգեբանի և արտթերապևտի կողմից:
11. **Ֆիզիոթերապիա.** զարգացվում կամ վերականգնվում են երեխաների ֆիզիկական կարողությունները և խանգարված գործառույթները՝ տարբեր ֆիզիկական վարժությունների իրականացման միջոցով:

**Կազմակերպության անվանումը.** Հոգեւոցիալական կարգավորման կենտրոն

**Հասցե.** ք. Երևան, Խանջյան 35/18

**Հեռախոս.** (010) 54 40 77

**Կայք.** www.cpsr.info

**Տրանսպորտային հաղորդակցությունը.** կազմակերպությունն այնպիսի վայրում է, որտեղ հասնելու համար կան մի շարք երթուղիներ, հետևաբար էական խնդիրներ չկան:

**Կազմակերպության բոլոր աշխատակիցներն ունեն մասնագիտական կրթություն:**

**Կազմակերպությունը մատուցում է հետևյալ ծառայությունները.**

1. Հոգեբանական օգնություն
2. Սոցիալական խնդիրների լուծում
3. Հոգեբանական, սոցիալական օժանդակություն տնային պայմաններում
4. Դեպքի վարողների /Case manager/ ծառայություններ
5. Խորհրդատվության/բուժման ապահովում՝ լավագույն կլինիկաներում
6. Հոգեկան առողջության խնդիրներով պայմանավորված իրավական հարցերի կարգավորում
7. Հիմնախնդիրների ամբողջական կարգավորում:
8. Անհատական հոգեբանական խորհրդատվություն կապված՝
  - ներոզների
  - ֆոբիաների
  - տագնապալիության
  - հոգեմարմնական և մարմնահոգեկան խնդիրների հետ:
9. Անհատական և խմբային հոգեբանական աշխատանք՝ ուղղված սուր սթրեսի և հետտրավմատիկ սթրեսի հաղթահարմանը:
10. Հոգեբանական խորհրդատվություն ընտանիքի և գույգերի համար՝ ուղղված տարբեր կոնֆլիկտային, պրոբլեմային, ճգնաժամային իրավիճակների հաղթահարմանը:
11. Անհատական հոգեբանական խորհրդատվություն դեռահասների համար՝ ուղղված միջանձնային, ներընտանեկան հարաբերությունների բարելավմանը, դեռահասության ճգնաժամի հաղթահարմանը, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշմանը:
12. Անհատական և խմբային հոգեբանական վերականգնողական աշխատանք հոգեկան խանգարումների դեպքում (կոգնիտիվ-վարքային թերապիայի օգնությամբ):
13. Խմբային հոգեբանական թրեյնինգ ուղղված անձնային աճին:
14. Անհատական և խմբային հոգեբանական աշխատանք՝ ուղղված ավելորդ քաշի նվազեցմանը:
15. Անհատական և խմբային հոգեբանական աշխատանք՝ ուղղված տարբեր կախվածությունների հաղթահարմանը՝
  - Համակարգչային
  - Ալկոհոլային
  - Թմրանյութային
  - Ծխախոտային
  - Ազարտային խաղերի
  - Կրոնական:
16. Հոգեբանական աշխատանք սուիցիդալ վարքի դեպքում:

17. Հոգեախտորոշում և հոգեթերապիա մեջքի քրոնիկական ցավի դեպքում:
18. Հոգեբանական ախտորոշում:

**Կազմակերպության անվանումը.** «Հույսի կամուրջ»

**Հասցե.** ք. Երևան, Կոբյունի 19ա  
**Հեռախոս.** (010) 56 01 43  
**Կայք.** bridgeofhope.am  
**Էլ. փոստ.** info@bridgeofhope.am  
**Ֆեյսբուքյան էջ.** <https://bit.ly/2GanboL>

**Կազմակերպության տեսակը.** ոչ պետական

**Կազմակերպության կազմակերպիչական ձևը.** ՀԿ

**Կազմակերպությունը հիմնադրվել է** 1996 թվականին: Կազմակերպությունն ունի կենտրոններ՝ ք. Երևանում և Տավուշի մարզի 4 համայնքներում՝ Դիլիջան, Բերդ, Իջևան և Նոյեմբերյան:

**Կազմակերպության առաքելությունը/նպատակը.** պաշտպանել հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները:

**Կազմակերպության տեսլականը.** նպաստել հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանը՝ համայնքային ծառայությունների մատչելիության ապահովման, կրթության իրավունքի իրացման հնարավորությունների ստեղծման, ինքնուրույն ապրելու հմտությունների զարգացման միջոցով:

**Թիրախ խումբը.** հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձինք, նրանց ընտանիքի անդամները՝ առանց տարիքային սահմանափակումների:

Կազմակերպության ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ պայման չէ հաշմանդամության կարգ ունենալը:

Կազմակերպության կողմից տրամադրվող բոլոր ծառայություններն անվճար են:

**Ծառայությունների մատուցման վայրը.** կազմակերպության տարածք, ինչպես նաև դպրոցներ, մանկապարտեզներ, համայնքային կառույցներ և այլն:

**Տրանսպորտային հաղորդակցությունը.** կազմակերպությունը չի փոխհատուցում թիրախ խմբի ճանապարհածախսը, սակայն տրանսպորտային տեղաշարժն ապահովվում է՝ կառույցին պատկանող տրանսպորտային միջոցներով:

**2015-2017թթ. ընթացքում սպասարկված անձանց ընդհանուր թիվը.** մոտավորապես 1400 անձ:

**2017թ. ընթացքում սպասարկված անձանց ընդհանուր թիվը.** մոտավորապես 700 անձ:

**Կազմակերպության բոլոր աշխատակիցներն ունեն մասնագիտական կրթություն:**

**Կազմակերպության ծառայություններն ուղղված են հիվանդությունների միջազգային 10-րդ վերանայված դասակարգչով սահմանված հոգեկան և վարքի խանգարումների հետևյալ տեսակներին.**

1. Հոգեկան և վարքային խանգարումներ՝ հոգեակտիվ նյութերի գործածման հետևանքով
2. Վարքային համախտանիշեր՝ պայմանավորված ֆիզիոլոգիական խանգարումներով և ֆիզիկական գործոններով
3. Չափահասի անձի և վարքի խանգարումներ
4. Մտավոր հետամնացություն

5. Հոգեբանական զարգացման խանգարումներ
6. Վարքային և հուզական խանգարումներ՝ սովորաբար մանկական և դեռահասության տարիքում սկսվող
7. Այլ հոգեկան խանգարումներ (չճշտված)

**Կազմակերպությունը մատուցում է հետևյալ ծառայությունները.**

1. **Կրթական ծառայություններ.** աշխատանք է իրականացվում դպրոցներում բազմամասնագիտական թիմի անդամների հետ՝ զարգացնելով նրանց կարողությունները ներառական կրթության, կրթության առանձնահատուկ պայմանների կարիքների գնահատման, անհատական ուսուցման պլանների կազմման առումով:
2. **Իրավաբանական խորհրդատվություն.** հարկ եղած դեպքում՝ շահառուներին իրավաբանի կողմից խորհրդատվություն է տրամադրվում կրթության իրավունքի, աշխատանքի իրավունքի, սոցիալական երաշխիքներից օգտվելու հնարավորությունների իրացման առումով:
3. **Հոգեբանական խորհրդատվություն և ծառայություններ,** որոնք տրամադրվում են հոգեբանների կողմից:
4. **Դրամաշնորհների տրամադրում.** որոշ դրամաշնորհների շրջանակում հայտարարություն է տրվում, մրցութային կարգով ընտրվում են այլ կառույցներ՝ ենթադրամաշնորհներ ստանալու նպատակով:
5. **Մասնագիտական խորհրդատվություն աշխատաշուկայում առկա իրավիճակի վերաբերյալ.** գնահատվում են շահառուների կարիքներն ու հետաքրքրությունները, աշխատանք է տարվում միջին մասնագիտական կրթության և մասնագիտական ուսուցման հաստատությունների հետ, իրականացվում են վերապատրաստումներ, ապահովվում է կապը գործատուների հետ:
6. **Իրավունքների և շահերի պաշտպանություն.** կազմակերպվում են քարոզարշավներ, ԶԼՄ մրցույթներ և այլն:
7. **Անհրաժեշտ ծառայություն ստանալու համար ուղղորդում:**
8. **Սոցիալ-հոգեբանական կրթական համայնքային ծառայություններ,** որոնց տրամադրման շրջանակներում համագործակցություն է հաստատվում շահագրգիռ այլ կողմերի հետ՝ մարզպետարանի համապատասխան բաժիններ, զբաղվածության տարածքային կենտրոններ և այլն:
9. **Ներառական կրթության զարգացմանն ուղղված ծրագրեր.** Կազմակերպությունը 2001թ.-ից սկսել է իրականացնել ներառական կրթության գաղափարի տարածմանն ուղղված միջոցառումներ: Փոփոխություններին ուղղված շարունակական աշխատանքներ են իրականացվել և իրականացվում են մակրոպրակտիկայում:

**Կազմակերպության անվանումը.** «Հույսի Մեծամոր» հասարակական կազմակերպություն

**Հասցե.** Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, N2 մանկապարտեզ

**Հեռախոս.** (077) 90 11 88

**Էլ. փոստ.** huysimetsamor@yahoo.com

**Ֆեյսբուքյան էջ.** <https://bit.ly/2StVIUO>

**Կազմակերպության տեսակը.** ոչ պետական

**Կազմակերպության կազմակերպափրավական ձևը.** ՀԿ

**Կազմակերպությունը հիմնադրվել է** 2009 թվականին:

**Կազմակերպության առաքելությունը/նպատակը.** նպաստել մտավոր և հոգեւոցիալական հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց ընտանիքների իրավունքների իրացմանը՝ սոցիալական, կրթական, մշակութային, առողջապահական ոլորտներում՝ շահերի պաշտպանության, իրավագիտակցության բարձրացման և շահագրգիռ կողմերի հետ համագործակցության միջոցով:

**Կազմակերպության տեսլականը.** բացառել խոցելի խմբերի նկատմամբ հասարակության բացասական վերաբերմունքը:

**Թիրախ խումբը.** 0-17 տարեկան մտավոր և հոգեւոցիալական հաշմանդամություն ունեցող անձինք, նրանց ընտանիքի անդամները:

Կազմակերպության ծառայություններից կարող են օգտվել միայն Արմավիրի մարզի բնակիչները՝ ներառյալ ք. Մեծամորի, ք. Արմավիրի և շրջակա համայնքների բնակիչներին:

Կազմակերպության ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ պայման է հաշմանդամության կարգ ունենալը:

Կազմակերպության կողմից տրամադրվող բոլոր ծառայություններն անվճար են:

**Ծառայությունների մատուցման վայրը.** կազմակերպության տարածք (ք. Մեծամոր, N2 մանկապարտեզ), ըստ կարիքի՝ շահառուի անմիջական միջավայր:

**Տրանսպորտային հաղորդակցությունը.** կազմակերպությունը չի փոխհատուցում թիրախ խմբի ճանապարհածախսը, չի ապահովում տրանսպորտային տեղաշարժը:

**2015-2017թթ. ընթացքում սպասարկված անձանց ընդհանուր թիվը.** 25 անձ:

**Կազմակերպության բոլոր աշխատակիցներն ունեն մասնագիտական կրթություն:**

**Կազմակերպության ծառայություններն ուղղված են հիվանդությունների միջազգային 10-րդ վերանայված դասակարգչով սահմանված հոգեկան և վարքի խանգարումների հետևյալ տեսակներին.**

1. Չափահասի անձի և վարքի խանգարումներ
2. Մտավոր հետամնացություն
3. Հոգեբանական զարգացման խանգարումներ
4. Վարքային և հուզական խանգարումներ՝ սովորաբար մանկական և դեռահասության տարիքում սկսվող

**Կազմակերպությունը մատուցում է հետևյալ ծառայությունները.**

1. **Խնամքի տրամադրում՝ ցերեկային ժամերին, կազմակերպության տարածքում:**
2. **Կրթական ծառայություններ.** դասընթացների կազմակերպում, որոնց նպատակն է իրազեկել ընտանիքի անդամներին, շահառուի համար նշանակալի անձանց՝ մտավոր և հոգեւոցիալական հաշմանդամության առանձնահատկությունների և դրանց ադեկվատ արձագանքելու եղանակների մասին:
3. **Հոգեբանական և սոցիալական խորհրդատվություն.** հոգեբանը և սոցիալական աշխատողը իրականացնում են անհատական և խմբային աշխատանքներ, կատարում են խորհրդատվություն, ուղղորդումներ: Բոլոր ծառայություններն ուղղված են սոցիալական ներառմանը և շահառուի/նրա ընտանիքի անդամների ուժեղացմանը, որպեսզի նրանք կարողանան ինքնուրույն հաղթահարել դժվարությունները:
4. **Արվեստի միջոցով թերապիա.** հոգեբանը և հատուկ մանկավարժը երեխաներին տալիս են հնարավորություն ներկերի և կավի միջոցով ստեղծագործելու և արտահայտելու ներքին զգացողությունները:
5. **Ավագաթերապիա.** հնարավորություն է տալիս զարգացնել շահառուների մանր մոտորիկայի հմտությունները:
6. **Անկախ կյանքի հմտությունների ուսուցում.** զարգացնել շահառուների առօրեական հմտությունները՝ անհատական և խմբային աշխատանքների միջոցով:

**Կազմակերպության անվանումը.** «Մեփլ լիֆս» հայ-կանադական բժշկական կլինիկա

**Հասցե.** ք. Երևան, Նորք-Մարաշ, Արմենակյան 129

**Հեռախոս.** (010/041/043/ 094) 65 07 17, (091) 42 15 35

**Կայք.** www.mapleleafsclinic.com

**Էլ. փոստ.** mapleleafsclinic@gmail.com, vardges\_avagyan@yahoo.com

**Կազմակերպության տեսակը.** ոչ պետական

**Կազմակերպության կազմակերպչի անունը.** ՍՊԸ

**Կազմակերպությունը հիմնադրվել է** 2012 թվականին, սակայն հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ծառայություններ է մատուցում 2015 թվականից:

**Կազմակերպության առաքելությունը/նպատակը.** աջակցել հոգեւոցիալական և մտավոր անձանց առողջության պահպանը:

**Կազմակերպության տեսլականը.** զարգացնել կազմակերպության նպատակին հասնելու հնարավորությունները՝ համապատասխանելով ժամանակակից չափանիշներին.

- կորպորատիվ ծառայությունների աշխարհագրական ընդլայնում
- կլինիկայի պրոֆիլի ընդլայնում՝ արտասահմանյան փորձը ունեցող բժիշկների ներգրավմամբ
- ընդլայնել արդեն գոյություն ունեցող կապերը տուրիստական կազմակերպությունների հետ՝ բարձրացնել բժշկական զբոսաշրջությունը

**Թիրախ խումբը.** մտավոր և հոգեւոցիալական խնդիրներ ունեցող անձինք, նրանց ընտանիքի անդամները՝ առանց տարիքային սահմանափակման:

Կազմակերպության ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ պայման չէ հաշմանդամություն կարգ ունենալը:

Կազմակերպության կողմից տրամադրվող բոլոր լրացուցիչ ծառայություններն անվճար են ստացիոնար բուժման ընթացքում:

**Ծառայությունների մատուցման վայրը.** կազմակերպության տարածք (Նորք-Մարաշ, Արմենակյան 129):

**Տրանսպորտային հաղորդակցությունը.** կազմակերպությունը չի փոխհատուցում թիրախ խմբի ճանապարհածախսը, չի ապահովում տրանսպորտային տեղաշարժը:

**2015-2018թթ. ընթացքում սպասարկված անձանց ընդհանուր թիվը.** 3750 անձ:

**2017թ. ընթացքում սպասարկված անձանց ընդհանուր թիվը.** 1250 անձ:

**Կազմակերպության բոլոր աշխատակիցներն ունեն մասնագիտական կրթություն:**

Կազմակերպության ծառայություններն ուղղված են հիվանդությունների միջազգային 10-րդ վերանայված դասակարգչով սահմանված հոգեկան և վարքի խանգարումների հետևյալ տեսակներին.

1. Օրգանական, ներառյալ սիմպտոմատիկ, հոգեկան խանգարումներ
2. Հոգեկան և վարքային խանգարումներ՝ հոգեակտիվ նյութերի գործածման հետևանքով
3. Շիզոֆրենիա, շիզոտիպային և գառանցանքային խանգարումներ

4. Տրամադրության (աֆեկտիվ) խանգարումներ
5. Ներքոտիկ, սթրեսով պայմանավորված և սոմատոֆորմ խանգարումներ
6. Վարքային համախտանիշներ՝ պայմանավորված ֆիզիոլոգիական խանգարումներով և ֆիզիկական գործոններով
7. Չափահասի անձի և վարքի խանգարումներ
8. Ստավոր հետամնացություն
9. Հոգեբանական զարգացման խանգարումներ
10. Վարքային և հուզական խանգարումներ՝ սովորաբար մանկական և դեռահասության տարիքում սկսվող
11. Հոգեկան խանգարում՝ չճշտված

**Կազմակերպությունը տրամադրում է.**

1. Հոգեբուժական օգնություն և սպասարկում

**Կազմակերպությունն իրականացնում է հիվանդանոցային և արտահիվանդանոցային /ամբուլատոր/ հոգեբուժական օգնություն և սպասարկում.**

1. Հիվանդանոցային և արտահիվանդանոցային /ամբուլատոր/ հետազոտություն և բուժում
2. Քրոնիկ մտավոր և հոգեւոցիալական հաշմանդամություն ունեցող անձանց խնամք
3. Սահմանային վիճակներում գտնվող անձանց հիվանդանոցային և արտահիվանդանոցային /ամբուլատոր/ հետազոտություն և բուժում
4. Վերականգնողական բուժում
5. Հոգեկան առողջության վերականգնում

**Կազմակերպությունը մատուցում է հետևյալ ծառայությունները.**

1. Բժշկական խորհրդատվություն, որը տրամադրվում է հոգեբույժի, նյարդաբանի, ընտանեկան բժշկի, թերապևտի, ուրոլոգի, գինեկոլոգի, սրտաբանի կողմից: Իրականացվում է ֆիզիոթերապիա, վերականգնողական թերապիա, բուժական մերսում, ուլտրաձայնային հետազոտություններ և այլն:
2. Հոգեբանական խորհրդատվություն, որն իրականացվում է հոգեբանի կողմից:
3. Հոգեթերապևտիկ խորհրդատվություն, որն իրականացվում է հոգեթերապևտի կողմից:
4. Արտթերապիա. երաժշտաբուժություն, գրաթերապիա:
5. Մարմնամարզություն:
6. Անհրաժեշտ ծառայություն ստանալու համար ուղղորդում, միջնորդություն և աջակցություն:

**Կազմակերպության անվանումը.** «Ջերմիկ անկյուն» Հիմնադրամ

Հիմնադրամն իրականացնում է խմբային տան 2 ծրագիր:

**Հասցե.**

Խմբային տուն 1. ք. Երևան, Միլիկյան թաղամաս, 4-րդ փող. 1-ին նրբ, 14/16-1 տուն

Խմբային տուն 2. Կոտայքի մարզ, գյուղ Առինջ, 20-րդ փող., 6 տուն:

**Հեռախոս.** (010) 39 81 50, (093) 80 70 60

**Կայք.** <http://www.friendsofwarmhearth.org/>

**Ֆեյսբուքյան էջ`** <https://www.facebook.com/friendsofwarmhearth/>

**Էլ. փոստ`** jermikankyun@gmail.com, natalie@friendsofwarmhearth.org

**Կազմակերպության տեսակը.** ոչ պետական

**Կազմակերպության կազմակերպչի անվանումը.** Հիմնադրամ

**Կազմակերպության ենթակայությունը.** ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

**Կազմակերպությունը հիմնադրվել է** 2008թ.-ին, սակայն ՀԱԽՈՒ անձանց ծառայություններ է մատուցել ավելի վաղ` սկսած 2006թ.-ից, ինչպես նաև 2018 թ.-ից:

**Կազմակերպության առաքելությունը/նպատակը.** մտավոր և հոգեւոցիալական հաշմանդամություն ունեցող երիտասարդներին հնարավորություն տալ լիարժեք ապրելու հասարակության մեջ` ունենալով իրենց կացարանը, իրենց տունը:

**Կազմակերպության տեսականը.** մտավոր և հոգեւոցիալական հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորություն ընձեռնել ունենալ սեփական ջերմիկ անկյունը:

**Թիրախ խումբը.** 18 տարեկան և բարձր մտավոր և հոգեւոցիալական հաշմանդամություն ունեցող, միայնակ երիտասարդները:

Կազմակերպության ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ պայման է հաշմանդամության կարգ ունենալը և ընտանիք չունենալը:

Կազմակերպության կողմից տրամադրվող բոլոր ծառայություններն անվճար են:

**Ծառայությունների մատուցման վայրը.** միայն կազմակերպության տարածք (Միլիկյան թաղամաս):

**Տրանսպորտային հաղորդակցությունը.** կազմակերպություն հնարավոր է հասնել միայն N27 և N36 միկրատավտոբուսներով և N 18 ավտոբուսով: Դրանց չվացուցակն անկայուն է, իսկ ժամը 20:00-ից հետո այս երթուղիները սովորաբար չեն գործում:

**2015-2017թթ. ընթացքում սպասարկված անձանց ընդհանուր թիվը.** 14 անձ,

**2018թ. ընթացքում սպասարկված անձանց ընդհանուր թիվը.** 1-ին խմբային տանը` 14 անձ, 2-րդ խմբային տանը` 8 անձ:

**Կազմակերպության բոլոր աշխատակիցները, բացի գիշերային հերթափոխի աշխատակիցներից, ունեն մասնագիտական կրթություն:**

**Կազմակերպությունը տրամադրում է.**

1. Հոգեբուժական օգնություն և սպասարկում
2. Հոգեթերապևտիկ օգնություն և սպասարկում

**Կազմակերպության ծառայություններն ուղղված են հիվանդությունների միջազգային 10-րդ վերանայված դասակարգչով սահմանված հոգեկան և վարքի խանգարումների հետևյալ տեսակներին.**

1. Օրգանական, ներառյալ սիմպտոմատիկ, հոգեկան խանգարումներ
2. Շիզոֆրենիա, շիզոտիպային և գառանցանքային խանգարումներ
3. Տրամադրության (աֆեկտիվ) խանգարումներ
4. Վարքային համախտանիշեր՝ պայմանավորված ֆիզիոլոգիական խանգարումներով և ֆիզիկական գործոններով
5. Մտավոր հետամնացություն
6. Այլ հոգեկան խանգարումներ (չճշտված)

**Կազմակերպությունը մատուցում է հետևյալ ծառայությունները.**

1. **Կացարանով ապահովում:**
2. **Բնախրային օգնություն և դրամական օժանդակություն:**
3. **Շուրջօրյա խնամք՝ կազմակերպության տարածքում:**
4. **Անհրաժեշտ ծառայություն ստանալու համար ուղղորդում, միջնորդություն և աջակցություն:**
5. **Անկախ կյանքի հմտությունների ուսուցում.** կենցաղավարման, ֆինանսների տնօրինման, ինքնուրույն կյանքի և այլ հմտությունների ուսուցում:
6. **Կրթական ծառայություններ.** գործում են նկարչության, կարպետագործության, տիկնիկագործության խմբակներ:
7. **Ֆինանսական խորհրդատվություն.** յուրաքանչյուր շահառու կազմակերպությունից ամսական որոշակի գումար է ստանում (սովորաբար՝ 2500 դրամ), որը կարող է տնօրինել իր հայեցողությամբ (օրինակ՝ ապրանքներ գնել և այլն): Միաժամանակ, շահառուներին տրամադրվում է խորհրդատվություն, թե ինչպես կարելի է ավելի արդյունավետ օգտագործել այդ գումարը, ինչպես պլանավորել ծախսերը, հաշվարկներ անել և այլն:
8. **Բժշկական խորհրդատվություն.** հրավիրյալ հոգեբույժն ամսական 4 անգամ խորհրդատվություն է տրամադրում շահառուներին: Բացի այդ, շահառուները հաշվառված են համայնքային պոլիկլինիկայում, և ըստ անհրաժեշտության, կարող են օգտվել այդ ծառայություններից:
9. **Հոգեբանական խորհրդատվություն.** հոգեբանն, ըստ անհրաժեշտության, խորհրդատվություն է տրամադրում շահառուներին, ինչպես նաև՝ շաբաթական մեկ անգամ խմբային թերապիա է անցկացնում:
10. **Արվեստի միջոցով թերապիա.** գորգագործության, կավագործության, ասեղնագործության, նկարչության և այլ խմբակների միջոցով ապահովվում է թերապևտիկ միջամտություն:
11. **Էրգոթերապիա,** որի շրջանակներում զարգացվում են աշխատանքային տարբեր հմտությունները:
12. **Ավագաթերապիա,** որն իրականացվում է շաբաթական մեկ անգամ, հոգեբանի կողմից:
13. **Մշակութային միջոցառումներ.** տարեկան մի քանի անգամ կազմակերպվում են այցելություններ թանգարաններ և մշակութային այլ հաստատություններ:
14. **Սպորտի և առողջ ապրելակերպի խթանման միջոցառումներ.** սպորտային խմբակներում ֆիզիկական վարժություններ են կատարում, խաղում են սեղանի թենիս և այլ խաղեր: Ընդ որում, խմբով մասնակցել են նաև թիավարության մրցաշարի:



**Կազմակերպության անվանումը.** Ռեքավերի Բոլեջ (Recovery College)  
(Հայկական հոգեբուժական ասոցիացիայի և Հոգեւոցիալական կարգավորման կենտրոնի համատեղ ծրագիր)

**Հասցե.** ք. Երևան, Խանջյան 35/18

**Կայք.** <https://bit.ly/2IbEhVg>

**Կազմակերպության կազմակերպիչական ձևը.** ՍՊԸ

**Կազմակերպությունը հիմնադրվել է** 2015 թվականին:

**Առաքելությունը/նպատակը.** Մտավոր և հոգեւոցիալական հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրել գիտելիքներ հոգեկան առողջության պահպանման, հոգեկան առողջության խնդիրներին արձագանքելու մասին:

**Տեսլականը.** ավելի ընդլայնել կառույցը՝ և՛ շատառունների թվի, և՛ նյութատեխնիկական հագեցվածության տեսանկյունից:

**Թիրախ խումբը.** 18 և բարձր տարիքի այն մտավոր և հոգեւոցիալական հաշմանդամություն ունեցող այն անձինք, ովքեր գտնվում են առողջական կայուն իրավիճակում:

Ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ պայման չէ հաշմանդամուան կարգ ունենալը:

Կան և՛ անվճար, և՛ վճարովի ծառայություններ:

**2015-2017թթ. ընթացքում սպասարկված անձանց ընդհանուր թիվը.** 120 անձ:

**Կազմակերպության բոլոր աշխատակիցներն ունեն մասնագիտական կրթություն:**

**Տրամադրվող ծառայություններն ուղղված են հիվանդությունների միջազգային 10-րդ վերանայված դասակարգչով սահմանված հոգեկան և վարքի խանգարումների հետևյալ տեսակներին.**

1. Օրգանական, ներառյալ սիմպտոմատիկ, հոգեկան խանգարումներ
2. Հոգեկան և վարքային խանգարումներ՝ հոգեակտիվ նյութերի գործածման հետևանքով
3. Շիզոֆրենիա, շիզոտիպային և զառանցանքային խանգարումներ
4. Ներոտիկ, սթրեսով պայմանավորված և սոմատոֆորմ խանգարումներ
5. Վարքային համախտանիշեր՝ պայմանավորված ֆիզիոլոգիական խանգարումներով և ֆիզիկական գործոններով
6. Չափահասի անձի և վարքի խանգարումներ
7. Մտավոր հետամնացություն
8. Հոգեբանական զարգացման խանգարումներ
9. Վարքային և հուզական խանգարումներ՝ սովորաբար մանկական և դեռահասության տարիքում սկսվող
10. Հոգեկան խանգարում՝ չճշտված

**Կազմակերպության կողմից մատուցվում են հետևյալ ծառայությունները.**

1. Կրթական ծառայություններ:
2. Իրավաբանական խորհրդատվություն:
3. Հոգեբանական խորհրդատվություն:
4. Անհրաժեշտ ծառայություն ստանալու համար ուղղորդում, միջնորդություն և աջակցություն:
5. Արվեստի միջոցով թերապիա:

6. Անկախ կյանքի հմտությունների ուսուցում:

**Կազմակերպության անվանումը.** Սթրեսի և ցավի կառավարման կենտրոն  
(Հայկական հոգեբուժական ասոցիացիայի և Հոգեառաջնության կարգավորման կենտրոնի համատեղ ծրագիր)

**Հասցե.** ք. Երևան, Խանջյան 35/18

**Կայք.** <https://bit.ly/2IbEhVg>

**Կազմակերպությունը հիմնադրվել է 2017 թվականին:** 2016թ-ից համագործակցում է Ցավի ուսումնասիրման հայկական ասոցիացիայի հետ: 2018թ.-ին կենտրոնի ներկայացուցիչներն այցելել են նաև ՌԴ, մասնակցելով “MANAGE PAIN” միջազգային գիտաժողովին, նոր համագործակցություն ձևավորել Միջդիսցիպլինար բժշկության ասոցիացիայի հետ:

**Առաքելությունը/նպատակը.** Ապահովել համալիր մոտեցում սթրեսի և ցավի հիմնահարցերի կանխարգելման, ախտորոշման, հաղթահարման գործընթացում: Բացի այդ, կենտրոնը հարթակ է ստեղծում բժիշկների և հոգեբանների համատեղ գործունեության համար, սթրեսի և ցավի հիմնահարցերին բազմամասնագիտական մոտեցում ապահովելու և արդյունավետ համագործակցային մոդել ներդնելու ուղղությամբ:

**Կազմակերպության կողմից մատուցվում են հետևյալ ծառայությունները.**

1. **Տեղեկատվական.** համագործակցություն ՋԼՄ-ների հետ՝ սթրեսի, ցավի մասին հասարակության իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով:
2. **Վերապատրաստումներ.** դասընթացներ ուսանողների, մանկավարժների, լրագրողների համար միջդիսցիպլինար սկզբունքով միաժամանակ համագործակցելով բժիշկների և հոգեբանների հետ:
3. **Անհատական խորհրդատվություն՝** սթրեսակայունության զարգացում ապահովելով:
4. **Իրազեկման աշխատանքներ.** ընդդեմ ցավի համաշխարհային օրվան նվիրված ասուլիս, «Ցավի հոգեբանություն» թեմայով դասախոսություն (Արցախի պետական համալսարան), «Ցավ և սթրես» թեմայով սեմինար, «Ցավ. ժամանակակից մոտեցումներ» թեմայով սեմինար, «Ցավը հոգեբուժության տեսանկյունից» սեմինար, «Ցավի հոգեբանություն» սեմինար, «Ցավի հոգեբանական ասպեկտները» հարցազրույց, «Ցավը սթրեսի մարմնական դիմակն է» հարցազրույց, «Հուզական ոլորտ և ցավի դրսևորումներ» ռադիո քննարկում, «Հոգեմարմնական առողջություն» աշխատաժողով:

**Կազմակերպության անվանումը.** «Սորս» հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների աջակցության հիմնադրամ

**Հասցե.** ք. Երևան, Նորք Մարաշ, 13 փողոց, 38 տուն

**Հեռախոս.** (077) 14 88 63, (077) 77 01 65

**Կայք.** SourceFoundation.am

**Էլ. փոստ.** sourcefoundation1@gmail.com, marinaparazyan@gmail.com

**Ֆեյսբուքյան էջ.** <https://bit.ly/2IQIPRp>

**Կազմակերպության տեսակը.** ոչ պետական

**Կազմակերպության կազմակերպչի անունը.** Հիմնադրամ

**Կազմակերպությունը հիմնադրվել է 2013թ.** նոյեմբերին: «Սորս» Հիմնադրամը ստեղծված է աջակցելու հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին:

**Առաքելությունը.** բարելավել հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների կյանքի որակը, նպաստել հասարակական կյանքում նրանց ներգրավմանը ու բարեկեցիկ միջավայրի ստեղծմանը:

**Տեսլականը.** աջակցության ձեռք մեկնել հնարավորինս շատ երեխաների և ընտանիքների, նպաստել նրանց հասարակության մեջ և աշխատավայրերում ներգրավմանը, ստեղծել անհրաժեշտ ծառայություններ, նոր որակի կյանքի պայմաններ միջազգային փորձին համաձայն և այդ ստանդարտներին համապատասխան:

**Գործունեության նպատակը.**

- Հայաստանում ստեղծել այնպիսի կենտրոնների և ծառայությունների մոդելներ, որոնք ամփոփ լուծումներ կտան հատուկ կարիքներ ունեցող երեխաների խնդիրներին
- Տրամադրել բարձրորակ և բազմակողմանի վերականգնողական թերապիա և հմտությունների զարգացմանը նպաստող աշխատանք
- Ապահովել լիարժեք կամ պալեատիվ բուժում
- Իրականացնել երեխայի ցերեկային խնամք և ժամանց
- Խթանել յուրաքանչյուրին համապատասխանող կրթություն և/կամ հմտությունների զարգացում
- Ստեղծել հարմարավետ և հյուրընկալ միջավայր
- Ստեղծել շփման հնարավորություններ (մանկական միջոցառումներ)
- Ապահովել որպես արդյունք՝ կյանքի որակի բարելավում,
- Փոխել հասարակության կարծրատիպային մոտեցումներն ու խղճահարությամբ վերաբերմունքը՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց:

**Թիրախ խումբը.** 0-16 տարիքային խմբի մտավոր և հոգեւոցիալական հաշմանդամություն ունեցող երեխաները և նրանց ծնողները:

Կազմակերպության ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ պայման է հաշմանդամության կարգ ունենալը:

Կազմակերպության կողմից տրամադրվող բոլոր ծառայություններն անվճար են: Կազմակերպության ֆինանսավորումն իրականացվում է տարբեր բարերարների և գործարարների աջակցությամբ, ինչպես նաև դոնորական համայնքի միջնորդությամբ:

Առաջնահերթություն տրվում են անապահով ընտանիքներին, միայնակ մայրերին:

**Ծառայությունների մատուցման վայրը.** կազմակերպության տարածք (Նորք Մարաշ 13 փողոց 38 տուն), ինչպես նաև հիմնադրամը իրականացնում է անհատական օգնականի (կախված երեխայի այդ պահին ունեցած պահանջներից՝ դայակի) ծառայության մատուցում տնային պայմաններում:

**Տրանսպորտային հաղորդակցությունը.** թիրախ խմբի կենտրոն և հետադարձ ուղղությամբ տրանսպորտային փոխադրումն իրականացվում է կազմակերպության կողմից:

**2018թ. ընթացքում սպասարկված անձանց ընդհանուր թիվը.** 180 շահառու ուղղակիորեն, իսկ անուղղակիորեն սպասարկված շահառուների թիվը՝ մոտավորապես 300 անձ:

**Կազմակերպության բոլոր աշխատակիցներն ունեն մասնագիտական կրթություն:**

**Կազմակերպության ծառայություններն ուղղված են հիվանդությունների միջազգային 10-րդ վերանայված դասակարգչով սահմանված հոգեկան և վարքի խանգարումների հետևյալ տեսակներին.**

1. Օրգանական, ներառյալ սիմպտոմատիկ, հոգեկան խանգարումներ
2. Հոգեկան և վարքային խանգարումներ՝ հոգեակտիվ նյութերի գործածման հետևանքով:
3. Շիզոֆրենիա, շիզոտիպային և զառանցանքային խանգարումներ
4. Տրամադրության (աֆեկտիվ) խանգարումներ
5. Ներոտիկ, սթրեսով պայմանավորված և սոմատոֆորմ խանգարումներ
6. Վարքային համախտանիշներ՝ պայմանավորված ֆիզիոլոգիական խանգարումներով և ֆիզիկական գործոններով
7. Ստավոր հետամնացություն
8. Հոգեբանական զարգացման խանգարումներ
9. Վարքային և հուզական խանգարումներ՝ սովորաբար մանկական և դեռահասության տարիքում սկսվող
10. Հոգեկան խանգարում՝ չճշտված

**Կազմակերպությունը տրամադրում է.**

1. Հոգեբուժական օգնություն և սպասարկում
2. Հոգեթերապևտիկ օգնություն և սպասարկում

**Կազմակերպությունը մատուցում է հետևյալ ծառայությունները.**

1. **Կրթական ծառայություններ.** իրականացվում են անզլերենի դասընթացներ, ծնողավարման հմտություններ, կար ու ձևի դասընթացներ:
2. **Բժշկական խորհրդատվություն.** իրականացվում է վերականգնողական ծառայությունների մատուցման ժամանակ:
3. **Հոգեբանական խորհրդատվություն.** իրականացվում են անհատական աշխատանքներ՝ հոգեբանի կողմից, որոնցում ներգրավվում են նաև ծնողները:
4. **Մասնագիտական խորհրդատվություն աշխատաշուկայում առկա իրավիճակի վերաբերյալ.** ծնողների համար իրականացվում է կար ու ձևի հմտությունների ուսուցանում, որն էլ նրանց մրցունակ է դարձնում աշխատաշուկայում: Հաճախ ծնողները ներգրավվում են կար ու ձևի արտադրական գործընթացի մեջ՝ որպես աշխատող:
5. **Դրամական օժանդակություն.** գուտ դրամական օժանդակություն չի տրամադրվում, սակայն որպես այլընտրանք տրամադրվում է գույք՝ պրոթեզաօրթոպեդիկ պարագաներ,

ինչպես նաև տրանսպորտային աջակցություն՝ երեխաներին անվտանգ տեղափոխելու նպատակով:

6. **Բնափրային օգնություն**, որը տրամադրվում է այն ընտանիքներին, ովքեր հայտնվել են ճգնաժամային իրավիճակում: Հիմնականում տրվում է սնունդ և հագուստ:
7. **Ահրաժեշտ ծառայություն ստանալու համար ուղղորդում, միջնորդություն և աջակցություն:**
8. **Արվեստի միջոցով թերապիա**. կավագործության, արտթերապիա, երաժշտաթերապիա, նկարչություն, ձեռքի աշխատանքների, պարի խմբակների միջոցով իրականացվում է թերապևտիկ միջամտություն:
9. **Մշակութային միջոցառումներ**. իրականացվում են ինչպես կենտրոնում, այնպես էլ արտակենտրոնային միջոցառումներ: Տոնում են հիշարժան տոները, մասնակցում տարբեր հանրային միջոցառումների:
10. **Ավագաթերապիա**, որն իրականացվում է հոգեբանի և արտթերապևտի կողմից:
11. **Ֆիզիոթերապիա:**
12. Անհատական օգնականի ծառայություն. Անհատական օգնականի ծառայությունը տրամադրվում է ելնելով երեխայի կարիքներից: Անհատական օգնականը ուղեկցում է երեխային դպրոց, մանկապարտեզ կամ այլ հաստատություններ կամ տնային պայմաններում հոգ է տանում երեխայի մասին:

**Կազմակերպության անվանումը.** «Սպիտակի խնամքի տուն» ծրագիր («Խնամք» ՀԿ)

**Հասցե.** ք. Սպիտակ, Շահումյան 7  
**Հեռախոս.** (091) 46 57 75, (098) 06 26 63:  
**Ֆեյսբուքյան էջ.** <https://bit.ly/2BhEK2q>  
**Էլ. փոստ.** spitaki.xnamqitun@mail.ru

**Կազմակերպության տեսակը.** Ոչ պետական  
**Կազմակերպության կազմակերպահրավական ձևը.** ՀԿ  
**Կազմակերպությունը հիմնադրվել է** 2016 թվականի մայիսի 30-ին:

**Կազմակերպության առաքելությունը/նպատակը.** հնարավորություն տալ այն ՀԱԽՈՒ անձանց, ովքեր երկար ժամանակ բնակվել են ինստիտուցիոնալ հաստատություններում, ապրելու Սպիտակի խնամքի տանը, որտեղ կապահովվի նրանց խնամքը, ինչպես նաև կգարգացվեն անկախ կյանքի հմտությունները:

**Կազմակերպության տեսլականը.** զուգակցվել այնպիսի ուժեղացնող, աջակցող ծառայություններով, որոնք կտրամադրվեն ՀԱԽՈՒ անձանց, երբ նրանք այլևս չեն ապրի խնամքի տանը:

**Թիրախ խումբը.** 18 տարեկանից բարձր տարիքային խմբերի ՀԱԽՈՒ անձինք՝ բոլոր մարզերից: Կազմակերպության ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ պայման է հաշմանդամության առաջին, երկրորդ կարգ ունենալը:

Կազմակերպության կողմից տրամադրվող բոլոր ծառայություններն անվճար են:  
Ֆինանսավորումը. 40 %-ը՝ պետական, 60 %-ը՝ ոչ պետական:

**Ծառայությունների մատուցման վայրը.** միայն կազմակերպության տարածք (ք. Սպիտակ, Շահումյան 7)

**Տրանսպորտային հաղորդակցությունը.** կազմակերպություն հնարավոր է հասնել տարբեր երթուղայիններով, որոնք աշխատում են 30ր., 60 ր. պարբերականությամբ, և գործում են մինչև ժամը 19:00:

**2015-2017թթ. ընթացքում սպասարկված անձանց ընդհանուր թիվը.** 18 անձ:  
**2017թ. ընթացքում սպասարկված անձանց ընդհանուր թիվը.** 11 անձ:

**Կազմակերպության բոլոր աշխատակիցները, բացի մի քանի խնամակալներից, ունեն մասնագիտական կրթություն:**

**Կազմակերպությունը տրամադրում է.**  
1. Հոգեբուժական օգնություն և սպասարկում  
2. Հոգեթերապևտիկ օգնություն և սպասարկում

**Կազմակերպության ծառայություններն ուղղված են հիվանդությունների միջազգային 10-րդ վերանայված դասակարգչով սահմանված հոգեկան և վարքի խանգարումների հետևյալ տեսակներին.**

1. Շիզոֆրենիա, շիզոտիպային և զառանցանքային խանգարումներ

2. Տրամադրության (աֆեկտիվ) խանգարումներ
3. Ներտոխիկ, սթրեսով պայմանավորված և սոմատոֆորմ խանգարումներ
4. Վարքային համախտանիշեր՝ պայմանավորված ֆիզիոլոգիական խանգարումներով և ֆիզիկական գործոններով
5. Մտավոր հետամնացություն

**Կազմակերպությունը մատուցում է հետևյալ ծառայությունները.**

1. Կացարանով ապահովում:
2. Շուրջօրյա խնամք՝ կազմակերպության տարածքում:
3. Անհրաժեշտ ծառայություն ստանալու համար ուղղորդում, միջնորդություն և աջակցություն:
4. Անկախ կյանքի հմտությունների ուսուցում (կենցաղավարման, ֆինանսների տնօրինման, ինքնուրույն կյանքի և այլ հմտությունների ուսուցում):
5. Բժշկական խորհրդատվություն. անհրաժեշտ բժշկական խորհրդատվություն, միջամտություն ստանալու համար բնակիչներն ուղղորդվում են համապատասխան ծառայություններ մատուցող կառույցներ: Բնակիչները գտնվում են մշտական բժշկական հսկողության տակ: Կազմակերպությունը հոգում է առողջության հետ կապված ծախսերը:
6. Բնախրային օգնություն և դրամական օժանդակություն. տարբեր բարեգործական կազմակերպություններ աջակցում են բնակիչներին և նրանց ընտանիքի անդամներին բնախրային օգնության ձևով՝ հագուստ, կոշիկ, սնունդ և այլն: Բնակիչներին ամսվա ընթացքում տրամադրվում է նաև որոշակի գումար, որպեսզի կարողանան հոգալ իրենց առօրյա լրացուցիչ ծախսերը:
7. Հոգեբանական խորհրդատվություն, որն իրականացվում է հոգեթերապևտի կողմից և՛ շահառուների, և՛ նրանց ընտանիքի անդամների համար:
8. Արվեստի միջոցով թերապիա. գործում են երգի, պարի, նկարչության, կարպետագործության, ձեռքի աշխատանքների խմբակներ:
9. Մշակութային միջոցառումներ. բնակիչները պարբերաբար տարբեր միջոցառումներ, համերգներ են պատրաստում և ներկայացնում կազմակերպության ներսում, միաժամանակ այցելվում են մշակութային վայրեր՝ թատրոն, կինո և այլն:

**Կազմակերպության անվանումը.** «Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն բարեգործական հասարակական կազմակերպություն

**Հասցե.** ք. Երևան, Չեխովի 33/1 (մուտքը Մանանդյան փողոցից /Մանանդյան 41)

**Հեռախոս.** (010) 42 78 50, (010) 49 93 13

**Ֆաքս.** (010) 499313

**Կայք.** www.prkutyun.am

**Էլ. փոստ.** prkutyun@mail.ru

**Տեյքրոքյան էջ.** <https://bit.ly/2Rb3oqh>

**Կազմակերպության տեսակը.** ոչ պետական

**Կազմակերպության կազմակերպաիրավական ձևը.** ՀԿ

**Կազմակերպությունը հիմնադրվել է** 1997 թվականին, ցերեկային կենտրոնը՝ 1999 թվականին:

**Կազմակերպության առաքելությունը/նպատակը.** նպաստել մտավոր խնդիրներ ունեցող դեռահասների և երիտասարդների սոցիալական, կրթական և առողջապահական, ինչպես նաև նրանց ընտանիքների հիմնախնդիրների լուծմանը ուսուցման, քարոզչության, իրավունքների պաշտպանության, խորհրդատվության, բուժառայությունների տրամադրման և միջնորդավորման միջոցով՝ նպատակ ունենալով նրանց լիարժեք ինտեգրել հասարակություն:

**Կազմակերպության տեսլականը.** նպաստել մտավոր խնդիրներ ունեցող դեռահասների և երիտասարդների մասնագիտական որոշակի հմտությունների ձեռքբերմանը՝ ապահովելով զբաղվածություն և ցերեկային խնամք՝ զարգացնելով նրանց աշխատանքային հնարավորությունները՝ մտավոր ունակությունների սահմաններում սոցիալական ծառայությունների մատուցման միջոցով:

**Թիրախ խումբը.** 17-35 տարեկան մտավոր խնդիրներ ունեցող երիտասարդները և նրանց ընտանիքի անդամները:

Կազմակերպության ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ պայման է հաշմանդամության խումբ ունենալը:

Կազմակերպության կողմից տրամադրվող բոլոր ծառայություններն անվճար են:

**Ծառայությունների մատուցման վայրը.** կազմակերպության տարածք Չեխովի 33/1, (մուտքը՝ Մանանդյան փողոցից)

**Տրանսպորտային հաղորդակցությունը.** կազմակերպությունն ունի տրանսպորտային 2 միջոց՝ միկրոավտոբուս և ավտոբուս, որոնցով ապահովվում է շահառուների տեղափոխումը տանից կենտրոն և հակառակը: Շահառուները կենտրոնում գտնվում են ժ.10:00-17:00, որի ընթացքում ստանում են ճաշ և ետճաշիկ:

**2015-2017թթ. ընթացքում սպասարկված անձանց ընդհանուր թիվը.** 37.983 անձ:

**2017թ. ընթացքում սպասարկված անձանց ընդհանուր թիվը.** 12.662 անձ:

**Կազմակերպության բոլոր աշխատակիցներն ունեն մասնագիտական կրթություն:**

**Կազմակերպության ծառայություններն ուղղված են հոգեկան և վարքի խանգարումների հետևյալ տեսակներին.**

1. Թեթև աստիճանի մտավոր հետամնացություն
2. Չափավոր աստիճանի մտավոր հետամնացություն
3. Ծանր աստիճանի մտավոր հետամնացություն
4. Դաունի համախտանիշ
5. Չճշտված շիզոֆրենիա
6. Աուտիզմ
7. Միկրոցեֆալիա
8. Օլիգոֆրենիա
9. Մանկական ուղեղային կաթված /ՄՈԻԿ /
10. Կենտրոնական նյարդային համակարգի օրգանական ախտահարում

**Կազմակերպությունը մատուցում է հետևյալ ծառայությունները.**

1. **Ցերեկային խնամքի ապահովում:**
2. **Հատուկ հոգեբանի ծառայություն,** որն ուղղված է շահառուի հուզականային ոլորտի բարելավմանը, հոգեբանական խնդիրների հաղթահարմանը:
3. **Հատուկ մանկավարժի ծառայություն,** որն ուղղված է շահառուի ճանաչողական ոլորտի և մտավոր ունակությունների զարգացմանը:
4. **Լոգոպեդի ծառայություն,** որ ուղղված է խոսքի զարգացմանը և խոսքի արտաբերման հետ կապված դժվարությունների հաղթահարմանը:
5. **Էրգոթերապիստի ծառայություն,** որն ուղղված է ինքնասպասարկման և սոցիալական հմտությունների զարգացմանը:
6. **Ավագաբերապիա.** իրականացվում է միայն այն շահառուների համար, ովքեր դրա կարիքն ունեն:
7. **Սոցիալական աշխատողի ծառայություն,** որն ուղղված է շահառուի սոցիալիզացիային և սոցիալական հմտությունների զարգացմանն ու ամրապնդմանը:
8. **Անկախ կյանքի հմտությունների ուսուցում.** կենցաղավարման, տարաբնույթ ռեսուրսների արդյունավետ օգտագործման և այլ հմտությունների ուսուցում:
9. **Կրթական ծառայություններ.** օրվա առաջին կեսին իրականացվում է գրաճանաչություն, թվաբանության ուսուցում, թեմատիկ գրույց-քննարկումներ՝ կախված յուրաքանչյուր շահառուի մտավոր կարողությունների աստիճանից, անհատական ունակություններից և կարիքներից:
10. **Մասնագիտական խորհրդատվություն.** կենտրոնի մասնագետների կողմից խորհրդատվություն է տրամադրվում շահառուների ծնողներին:
11. **Արվեստի միջոցով թերապիա.** կենտրոնում գործում են արվեստի խնբակներ (ձեռագործության և ապլիկացիայի, նկարչության և բրնձագործության, կավագործության, պարի, թատերական և տիկնիկային), որոնց միջոցով իրականացվում է շահառուների զբաղվածությունը: Շահառուները պարբերաբար մասնակցում են տարբեր միջոցառումների, փառատոնների, նրանց աշխատանքները ներկայացվում են ցուցահանդես-վաճառքների:
12. **Մշակութային միջոցառումներ.** Կենտրոնում գործում է «Փրկություն» թատերախումբը, որի բոլոր դերասանները մտավոր խնդիրներ ունեցող երիտասարդներ են: Նրանք պարբերաբար թատերական ներկայացումներով ելույթ են ունենում տարբեր տիպի հաստատություններում, մասնակցում են թատերական փառատոնների՝ ներկայացնելով իրենց թատերական հմտություններն ու կարողությունները: Ընդ որում, պարբերաբար կազմակերպվում են ներքաղաքային և միջքաղաքային այցելություններ՝ թանգարաններ և մշակութային այլ հաստատություններ:

13. **Սպորտի և առողջ ապրելակերպի խթանման միջոցառումներ.** շահառուները մասնակցում են մի շարք սպորտային մրցաշարերի և փառատոնների:
14. **Բուժմիջնորդավորում.** կենտրոնում գործում է անվճար ատամնաբուժական ծառայություն, որից կարող են օգտվել կենտրոնի շահառուները և նրանց ընտանիքի անդամները: Բացի այդ կենտրոնը միջնորդավորման միջոցով նպաստում է աչքի պրոթեզավորման կարիք ունեցող շահառուների պրոթեզավորման իրականացմանը:
15. **Բնաիրային օգնություն.** Տարվա մեջ երեք անգամ (Դեկտեմբերի 3, Հունիսի 1 և Ամանոր) կենտրոնում անդամագրված շահառուները ստանում են բնաիրային օգնություն (հազուստի տրամադրում շահառուներին, ընտանիքի անդամներին՝ կարիքից ելնելով):

**Կազմակերպության անվանումը.** «Քայլ առաջ»

**Հասցե.** ք. Երևան, Գյուլբենկյան 71, Երևան 0033

**Հեռախոս.** (091) 42 64 32

**Էլ. փոստ.** ngostepforward2017@gmail.com

**Ֆեյսբուքյան էջ.** <https://bit.ly/2D0ngYk>

**Կազմակերպության տեսակը.** ոչ պետական

**Կազմակերպության կազմակերպչի անունը.** ՀԿ

**Կազմակերպությունը հիմնադրվել է 2017թ.-ին:** Այն հանդիսանում է զարգացման առանձնահատկություններ և հաշմանդամություն ունեցող երեխաների (խոսքի հապաղում, մտավոր և վարքային խնդիրներ, Դաուն համախտանիշ, դիսգրաֆիա, խլություն) ծնողների կողմից հիմնադրված կազմակերպություն:

**Կազմակերպության առաքելությունը/նպատակը.** նպաստել զարգացման առանձնահատկություններ, հաշմանդամություն ունեցող երեխաների, դեռահասների կյանքի որակի բարելավմանը, իրականացնել շահապաշտպանություն:

**Կազմակերպության տեսլականը.** կազմակերպության թիրախ խմբին ներառել հասարակություն:

**Թիրախ խումբը.** 0-18 տարեկան վարքային խնդիրներ, աուտիզմ, դաունի համախտանիշ ունեցող երեխաներ, նրանց ընտանիքի անդամներ:

Կազմակերպության ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ պայման չէ հաշմանդամության կարգ ունենալը:

Կազմակերպության կողմից տրամադրվող բոլոր ծառայություններն անվճար են:

**Տրանսպարտային հաղորդակցությունը.** կազմակերպությունը չի փոխհատուցում թիրախ խմբի ճանապարհածախսը, չի ապահովում տրանսպորտային տեղաշարժը:

**2015-2017թթ. ընթացքում սպասարկված անձանց ընդհանուր թիվը.** 50 անձ:

**2017թ. ընթացքում սպասարկված անձանց թիվը.** 60 անձ:

**Կազմակերպության բոլոր աշխատակիցներն ունեն մասնագիտական կրթություն:**

Կազմակերպության ծառայություններն ուղղված են հիվանդությունների միջազգային 10-րդ վերանայված դասակարգչով սահմանված հոգեկան և վարքի խանգարումների հետևյալ տեսակներին.

1. Հոգեբանական զարգացման խանգարումներ

**Կազմակերպությունը մատուցում է հետևյալ ծառայությունները.**

1. **Կրթական ծառայություններ,** որոնք մատուցվում են թիվ 126 Մորգենթաուի անվան դպրոցում, որտեղ գործում է առաջին ռեսուրս դասասենյակը միջազգային չափանիշներին համապատասխանող:
2. **Անհրաժեշտ ծառայություն ստանալու համար ուղղորդում, միջնորդություն և աջակցություն:**
3. **Արվեստի միջոցով թերապիա.** կավագործության, նկարչության և այլ խմբակների միջոցով արտթերապևտի կողմից իրականացվում է թերապևտիկ միջամտություն:

4. **Էրգոթերապիա**, որի նպատակն է ինքնասպասարկման հմտությունների զարգացումը, որն իրականացվում է էրգոթերապիստի կողմից:
5. **Սպորտի և առողջ ապրելակերպի խթանման միջոցառումներ**. գործում են ֆուտբոլի և բասկետբոլի խմբակներ: Նախատեսվում է ստեղծել ադապտիվ ներառական մարզասրահ, որտեղ ներգրավվելու են համայնքում ապրող հաշմանդամություն ունեցող և չունեցող երեխաները:
6. **Անկախ կյանքի հմտությունների ուսուցում:**

**Կազմակերպությունը իրականացրել է նաև հետևյալ նախագծերը.**

1. Հիպոթերապիայի անվճար կուրսեր 2 ամիս տևողությամբ:
2. «Ձեռք ձեռքի» սոցիալ – մշակութային ներառական կենտրոն-ճամբար, որի արդյունքում 50 երեխաների վերականգնողական ծառայություններ են մատուցվել:

## **Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ծառայությունների մատուցման ոլորտում առկա հիմնախնդիրները ՀՀ-ում**

*Հիմնախնդիրների նկարագրությունն իրականացվել է միջազգային չափորոշիչների և ներպետական օրենսդրության, փորձագիտական հարցազրույցների և կազմակերպությունների քարտեզագրման արդյունքների վերլուծության և համադրության միջոցով:*

Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող ծառայությունների որոտում առաջնահերթ հիմնախնդիրն է՝ ծառայությունների կնէտրոնացումը ինստիտուտների ներքո և անձի բնակության վայրում ծառայությունների հասանելիության ցածր մակարդակը կամ բացակայությունը: Ընդ որում, խնդիր է թե՛ համայնքին հասանելի ծառայությունների մատչելիությունը և աջակցող ծառայությունների բացակայությունը, թե՛ ըստ հաշմանդամության տեսակի ծառայությունների հասանելիությունը և մատչելիությունը: Նման իրավիճակում ոչ միայն խախտվում են անձի հիմնարար իրավունքները այլ նաև առավել խորանում են խարանը և կարծրատիպերը հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ:

Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունները կատարելու և համայնքահեն ու մարդակենտրոն ծառայություններ ներդնելու նպատակով մշակվեցին և ընդունվեցին երկու ռազմավարական փաստաթղթեր՝ ՀՀ առողջապահության նախարարության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից:


### **Հայեցակարգի և ռազմավարության իրագործմանը բնորոշ խնդիրները**

ՀՀ-ում հոգեկան առողջության բնագավառում կարևոր նշանակություն ունեցող երկու հայեցակարգային փաստաթղթերն են Հայեցակարգը և Ռազմավարությունը (2014-2019թթ.):

Երկու փաստաթղթերն էլ հիմնաքարային են հոգեկան առողջության ոլորտում, քանի որ դրանցում առաջին անգամ ամրագրվել է ապաինստիտուցիոնալացման գաղափարը և ձևակերպվել է այլընտրանքային մոդելների ստեղծման նպատակը:

Թե՛ Հայեցակարգով, թե՛ Ռազմավարությամբ նախատեսված այլընտրանքային ծառայությունների առաջարկվող մոդելները ներկայացված են ստորև բերված գծապատկերում:

**Գծապատկեր N5.** ՀՀ-ում այլընտրանքային ծառայությունների առաջարկվող մոդելները:



Ըստ փորձագետների, այս փաստաթղթերի խնդիրները կապված են ոչ այնքան դրանց բովանդակության, որքան՝ իրագործման հետ: Ցավոք, դրանցում շարադրված գաղափարները մինչ այժմ կյանքի չեն կոչվել:

Մասնավորապես, «Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայությունների տրամադրման հայեցակարգի իրականացման միջոցառումների 2013-2017 թվականների ծրագրում»<sup>3</sup> (բաղկացած 20 կետից) (այսուհետ՝ Ծրագիր) հոգեւոցհիւլական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված վերոնշյալ այլընտրանքային մոդելներից որոշները մինչ այս պահին արդեն պետք է ներդրված լինեին: Դրանք են.

- Երկու համայնքում ստեղծել շուրջօրյա խնամքի տներ՝ առավելագույնը 30 անձի բնակության համար,
- Երեք համայնքում ստեղծել համայնքային ցերեկային կենտրոններ՝ առավելագույնը 30-50 անձի համար,
- Առնվազն երկու համայնքում ստեղծել ցերեկային կենտրոններ երեխաների և դեռահասների համար՝ 30-50 անձի համար,
- Կազմակերպել տասը սատարող բնակարաններ՝ 3-10 անձի բնակության համար,
- Ստեղծել խնամքի մեկ շուրջօրյա և մեկ ցերեկային կենտրոններ՝ տարեցների համար:

<sup>3</sup> Տե՛ս ՀՀ Կառավարության նիստի N36 արձանագրությունը Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայությունների տրամադրման հայեցակարգի իրականացման միջոցառումների 2013-2017 թվականների ծրագրին հավանություն տալու մասին, <https://bit.ly/2GRJgcm>:

Մինչդեռ, ստեղծվել են միայն Սպիտակի խնամքի տունը և «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոնը:

Պլանավորված մյուս միջոցառումները, ըստ փորձագիտական հարցման տվյալների, չեն իրականացվել՝ ֆինանսական միջոցների բացակայության հիմնավորումով:

Ըստ հարցված փորձագետների՝ «գործողությունների թղթի վրա մնալու» մյուս պատճառն այն է, որ պատասխանատու կառույցները հետևողական չեն եղել միջոցառումների իրականացման հարցում: Ֆինանսական միջոցների սղության փաստարկը ոչ բոլոր դեպքերում է կիրառելի, քանի որ չեն իրագործվել նույնիսկ այն միջոցառումները, որոնք լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավում չէին պահանջում: Օրինակ, Սպիտակի խնամքի տունը ստեղծվել է ոչ պետական միջոցներով:

Չեն իրականացվել նաև այն միջոցառումները որոնք չեն պահանջել ֆինանսավորում. օրինակ՝ անձին անգործունակ ճանաչելու համակարգի վերանայումը:

Վերոնշյալ փաստաթղթերում սահմանված մոտեցումները չեն դարձել հիմնական դերակատարների գործունեության ընդհանուր ուղեւիշերը: Ընդհանուր առմամբ, պլանավորված միջոցառումների կատարումը խիստ հատվածային է:

### **Օրենսդրական դաշտի խնդիրներ**

ՀՀ-ում գործում է «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքը, որը կարգավորում է հոգեկան առողջության և հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հետ կապված հարաբերությունները:

Փորձագիտական հարցման արդյունքների համաձայն՝ Օրենքում մի շարք խնդիրներ կան՝ տարբեր հասկացությունների ոչ հստակ ձևակերպման հետ կապված: Թեև տարիների ընթացքում հասունացել է Օրենքի հասկացութային ապարատի վերանայման անհրաժեշտությունը, սակայն ակնկալվող փոփոխություններն այդպես էլ չեն արվել:

Փորձագետներից մի քանիսի կարծիքով՝ հոգեկան առողջության խնդրի դեպքում առաջին արձագանք ցույց տվող մարմինների՝ շտապ օգնության, ոստիկանության ներկայացուցիչները հաճախ խուսափում են հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց հետ «... գործ ունենալուց, քանի որ դա նրանց համար լրացուցիչ քաշքշուկ և գլխացավանք է»: Պատճառներից մեկն այն է, որ Օրենքում հստակ սահմանված չեն նշված մարմինների կողմից միջամտության ենթակա իրավիճակներն ու եղանակները:

Մյուս տարածված պատճառը համապատասխան կառույցների աշխատակիցների՝ օրենսդրական և ենթաօրենսդրական կարգավորումների իմացության ոչ բավարար մակարդակն է: Իրազեկվածության բացը հանգեցնում է չհիմնավորված զգուշավոր վարքի՝ առկա խնդիրներից հնարավորինս հեռու մնալու դրդապատճառով:

### **Ապահիստիտուցիոնալացման ընթացիկ միջոցառումներին բնորոշ խնդիրներ**

Ըստ հարցված փորձագետների՝ հոգեկան առողջության ոլորտում իրականացվող միջոցառումների ու ծրագրերի իրականացման հիմքում հիմնականում դրվում է ֆինանսական միջոցների խնայողության, և ոչ թե՛ մարդու իրավունքների պաշտպանության, կարիքների արձագանքելու կամ այլ գաղափարները:

Օրինակ, վերջին տարիներին հոգեկան առողջության ոլորտում ծառայություններ մատուցող կառույցների օպտիմալացման հիմքում դրված է ոչ թե՛ հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց կարիքների հնարավորինս արդյունավետ թիրախավորման, այլ՝ ծախսերի կրճատման խնդիրը: Ապահիստիտուցիոնալացումը փաստացի

վերածվել է կառույցների փակման գործընթացի, սակայն առանց անհրաժեշտ ու բավարար համայնքահեն աջակցության միջոցների ստեղծման և զարգացման:

Ըստ փորձագետների, օպտիմալացման միջոցառումներն իրականացվել են ինքնաբերաբար առանց նախապատրաստական աշխատանքների, և արդյունքում հանգեցրել են մարդկանց դիմադրությանը: Այդ գործընթացի շահառուներին պատշաճ կերպով չեն ներկայացվել ապահիստիտուցիոնալացման նպատակներն ու ակնկալվող արդյունքները: Այդ պատճառով էլ շահառուների և նրանց ընտանիքների մոտ վախ և անվստահություն է ձևավորվել դրանկատմամբ:

Փորձագետների մեծամասնության կարծիքով՝ համեմատաբար հաջողված միջոցառում է Սպիտակի խնամքի տան ստեղծումը, չնայած այն բանին, որ այստեղ էլ որոշ խնդիրներ կան օրինակ, (Սպիտակի տանը գտնվող անձանց թիվն ավելին է, քան սահմանված է միջազգային չափանիշներով, և այլն): Ուստի այն նաև հակում ունի ձեռք բերելու ինստիտուտին հատուկ հատկանիշներ:

ՀՀ-ում հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց դեռևս ծառայություններ են մատուցում հիմնականում հոգեբուժական հաստատությունները, ինչի արդյունքում հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձը մեկուսացվում է հասարակությունից և ոտնահարվում են նրա այլ իրավունքները:

### **Քաղաքականության մշակման գործընթացին և հիմնական դերակատարների համագործակցությանն առնչվող խնդիրներ**

Քաղաքականության մշակման և դրա հետագա իրագործման գործընթացում գլխավոր խոչընդոտն այն է, որ հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող բժշկական օգնության հետ կապված հիմնահարցերը՝ ՀՀ Առողջապահության նախարարության, իսկ խնամքի տրամադրումը՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության լիազորության ներքո են: Գործնականում հոգեկան առողջության պահպանման և հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ու սոցիալական այլ հարցերը սերտորեն փոխադրված են: Հետևաբար՝ առաջարկվող ծառայություններն էլ պետք է փոխարացնող, համակողմանի ու ներդաշնակ լինեն: Թե վերոնշյալ նախարարությունների, թե այլ դերակատարների միջև համագործակցության բացերն ու տարանջատ գործողությունները թույլ չեն տալիս համակարգային մոտեցում ունենալ նշված խնդիրներին:

Քաղաքականության մշակման գործընթացում անջրպետ կա նաև տարբեր տարիքային խմբերի հիմնահարցերով զբաղվող մարմինների միջև: Հոգեկան առողջության ոլորտում պատասխանատու կառույցները հիմնականում մասնագիտացած են մեծահասակների հոգեկան առողջության խնդիրների ուղղությամբ: Ակնկալվում է, որ հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաների խնդիրները պետք է լինեն երեխաների առողջությամբ զբաղվող կառույցների հոգածության ներքո: Սակայն վերջիններիս գործունեության մեջ էլ ավանդաբար կարևորվել և շարունակում են կարևորվել ֆիզիկական առողջության խնդիրները: Այսպիսով, թե՛ պատասխանատու մարմինները, թե՛ առաջարկվող ծառայություններն ու ենթակառուցվածքները տարանջատված են տարիքային խմբերի և ոչ թե թիրախային հիմնախնդիրների սկզբունքով: Նման տարանջատումը ևս չի նպաստում միասնական մոտեցման կիրառությանը:

Խնդիրներ կան նաև կառույցների միջև շահառուների մասին տեղեկատվության փոխանցման առումով, ինչի պատճառով հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող աջակցությունը դառնում է մասնատված, ոչ հովիստիկ: Օրինակ, տեղամասային

պոլիկլինիկաներում բարդացված է ուղեգրման գործընթացը, որը հիմք է դիսպանսերում բուժում իրականացնելու համար: Մինչև 7 տարեկաններին հեշտությամբ ուղեգրում են, մնացած դեպքերում հաճախ կարիք է լինում երկար ու ժամանակատար բանակցությունների, կրկնակի այցերի, և այլն:

### **Ծառայություններ տրամադրող կազմակերպությունների տեսակներ**

ՀՀ-ում հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ծառայություններ են մատուցում գլխավորապես ավանդական հաստատությունները՝ հոգեբուժական կենտրոններ, տուն-ինտերնատներ, և այլն: Մրանք հիմնականում փակ տիպի են և սահմանափակում են հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացման հնարավորությունները: Լինելով ԽՍՀՄ «Ժառանգությունը», և հետագայում որևէ էական բարեփոխման չարժանանալով՝ այդ հաստատությունները թե՛ բարոյապես (բովանդակային-գաղափարական), թե՛ նյութատեխնիկական առումով սպառվել են:

Հայաստանում դեռևս չկա այնպիսի ծառայություն, որում համապարփակ և համակողմանի կերպով կգնահատվեն հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները, ինչի հիման վրա էլ նրանց կուղղորդեն համապատասխան կազմակերպություններ:

Եթե հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող չափահասների համար որոշ ոչ ստացիոնար ծառայություններ կան, ապա հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաների դրությունն առավել խնդրահարույց է, քանի որ անհրաժեշտ ծառայությունները կամ բացակայում են, կամ խիստ հատվածական են: Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաների հետ աշխատանքը հատուկ մոտեցում է պահանջում և՛ շենքային պայմանների, և՛ մասնագիտական կազմի, և՛ կիրառվող մեթոդների ու տեխնիկաների առումով:

Առավել խնդրահարույց է հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրենց միջավայրում, տանը, ընտանիքում, աշխատանքային կամ համընդհանուր կրթական միջավայրում ծառայությունների սակավությունը կամ բացակայությունը:

Դրա արդյունքում հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց համար նվազագույն ծառայություններ ապահովելու համար նրանց տեղավորում են փակ հաստատություններում, որոնք ևս հասանելի չեն՝ բոլորի համար: Տեղերի սակավության պատճառով բազմաթիվ հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձինք սպասում են իրենց հերթին, որպեսզի կարողանան որևէ հաստատությունում «տեղավորվել»: Այսպիսով, թեև փակ տիպի ինստիտուցիոնալ հաստատությունները ծառայությունների ամենանախընտրելի տարբերակը չեն, անգամ այդ պարագայում դրանք հասանելի չեն շատերին:

### **Ծառայությունների հարմարեցվածություն**

Անձին փակ հաստատությունում տեղավորելն ինքնին հանդիսանում է և հանգեցնում է մի շարք իրավունքների խախտումների: Իսկ փակ հաստատություններում արձանագրված անմարդկային պայմանները կարող են էլ ավելի վատթարացնել անձի վիճակը:

Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ծառայություններ մատուցող կառույցների մեծ մասը հիմնանորոգման կարիք ունի. սանհանգույցներն ու սենյակները, ընդհանուր առմամբ՝ շենքային պայմանները, հարմարեցված չեն հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին: Օրինակ՝ տեղաշարժման դժվարություններ ունեցող անձանց համար չկան անհրաժեշտ թեքահարթակներ՝ նույնիսկ մի հարկից մյուսը տեղափոխվելու համար, և այլն: Փորձագետների մեծ մասի կարծիքով, հիմնական

պատճառն այն է, որ պետությունը բավարար ուշադրություն չի դարձրել այս խնդրին և անհրաժեշտ ներդրումներ չի իրականացրել: Չնայած որոշ հաստատություններում կոսմետիկ վերանորոգումներ են արվել, սակայն, ընդհանուր առմամբ, շենքային պայմաններն անմխիթար վիճակում են գտնվում:

Գրեթե բոլոր հաստատություններում մտահոգիչ է գերբնակեցվածությունը, երբ թվով ավելի շատ հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձինք են բնակվում միևնույն սենյակում, քան սահմանված է չափանիշներով:

Բացի այդ, ծառայությունները հիմնականում կենտրոնացված են մայրաքաղաքում, ինչը մարզերում բնակվող հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց գրկում է տվյալ ծառայությունները ստանալու հնարավորությունից: Բազմաթիվ բնակավայրերում ընդհանրապես բացակայում են հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված ծառայությունները, իսկ դրանց առկայության դեպքում էլ ծառայություն ստանալու համար հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձը ստիպված է լինում հասնել բնակավայրի մի ծայրից մյուսը, կամ որևէ գյուղից՝ դեպի մարզկենտրոն:

### **Մասնագիտական կազմ և կումպետենցիաներ**

Չոգեբուժությունն ամենաբարդ ոլորտներից է այն առումով, որ աշխատանքային գործընթացը կապված է ամենօրյա սթրեսային իրավիճակների հետ: Բացի այդ, ՀՀ-ում «հոգեբուժություն» մասնագիտության համբավն այդքան էլ բարձր չէ, իսկ ցածր աշխատավարձն ու ոչ բարվոք աշխատանքային պայմանները բացասական նախադրյալներ են ստեղծում մասնագիտական այրման համար:

Չնայած նրան, որ առողջապահության ոլորտում աշխատելու համակարգը պարտադրում է, որ բժիշկները յուրաքանչյուր 5 տարին մեկ պետք է մասնակցեն վերապատրաստումների և ստանան կրեդիտներ, սակայն դեռևս առկա են մի շարք խնդիրներ՝ դասընթացների բովանդակության առումով:

Չոգեբուժական հաստատությունների որոշ աշխատողներ՝ հոգեբաններ, արտթերապիստներ և այլն, չունեն համապատասխան մասնագիտական կրթություն. տևական ժամանակ լինելով այս ոլորտում՝ նրանք իներցիոն կերպով շարունակում են աշխատել և ծառայություններ մատուցել: Հասարակության մեջ գոյություն ունեցող մերժողական վերաբերմունքը, մասնագիտական կրթական ծրագրերի բացակայությունը պատճառ են հանդիսանում աշխատակազմի կողմից կարծրատիպային մոտեցման դրսևորման, իսկ աշխատելառճը՝ պասիվացնող և շահառուների իրավունքների ոտնահարման ռիսկեր պարունակող: Շահառուները դիտվում են որպես ծառայությունից պասիվ օգտվողներ, և ոչ թե՛ ակտիվ մասնակիցներ:

Մեկ այլ խնդիր է «ուղեղների արտահոսքը», երբ առանց այն էլ թվով քիչ մասնագետները լքում են երկիրը, քանի որ չեն ստանում արժանապատիվ վարձատրություն, չունեն բարվոք աշխատանքային պայմաններ, և այլն:

Ուսումնասիրված հաստատություններից շատերում առկա էին բազմաթիվ թափուր հաստիքներ, որոնք չեն համալրվում տարբեր պատճառներով: Ըստ հարցվողների, հաստիքների՝ թափուր մնալու հիմնական պատճառներն են. ցածր աշխատավարձերը և աշխատանքի ընդունվելուց հետո աշխատանքային պարտականությունների կատարման թերացումը, ինչն չի հերթին պայմանավորված է ոլորտին և դրա առանձնահատկություններին լավ ծանոթ չլինելու, ոլորտային փորձի պակասի, մեծ ծանրաբեռնվածության, և այլ հանգամանքներով:

Հետազոտության իրականացման պահին պետական հաստատություններից մեկում, օրինակ, թափուր էին հետևյալ հաստիքները. բժիշկ-թմրաբան (հաստիքը թափուր է մնացել դեռևս 2013թ.-ից), բժիշկ-թերապևտ (թափուր է 2014թ.-ից), բժիշկ-հոգեբույժ (թափուր է 2015թ.-ից):

Մեկ այլ պետական հաստատությունում 4 տարի է՝ թափուր է դիետոքոչ հաստիքը, 2 տարի՝ հերթապահ բժշկի հաստիքը, մեկ տարի՝ տեղամասային բժիշկ-հոգեբույժի հաստիքը, և այլն:

Մյուս պետական հաստատությունում ավելի քան 4 ամիս թափուր են հոգեբույժի, թերապևտի, թոքաբանի, իրավախորհրդատուի հաստիքները:

Հաջորդ պետական հաստատությունում, օրինակ, թափուր են վերականգնողաբանի, բժշկի, մարմնակրթության ուսուցչի հաստիքները:

Անձնակազմի այլ թափուր հաստիքներ (սանիտար, սոցիալական աշխատող, միջոցառումների կազմակերպիչ, մատենագիր, վարորդ, հաշվապահ, այլ) ևս հանդիպում են՝ այս կամ այն պետական հաստատությունում:

Մասնագետների պակասի խնդիրը հատկապես ակտուալ է մարզային հաստատություններում, որտեղ վերոնշյալ հաստիքները թափուր են մնում ավելի տևական ժամանակահատվածում (մի քանի տարի) քան մայրաքաղաքում: Անգամ հաստիքների համալրման պարագայում էլ ցածր աշխատավարձի և ոչ գրավիչ աշխատանքային պայմանների պատճառով մարզային հաստատություններում կադրերի հոսունությունը բավական բարձր է:

### **Հասարակության վերաբերմունք և մասնակցայնություն**

Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ հասարակության վերաբերմունքի առումով փորձագետների կարծիքները տարբերվում են: Մի մասը գտնում է, որ ոչինչ չի փոխվել և ինչպես անցյալում, այնպես էլ ներկայում հասարակությունը բացառում է հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց՝ պիտակավորելով և բացասական վերաբերմունքի արժանացնելով: Մյուս մասը գտնում է, որ դրական տեղաշարժ կա հասարակության վերաբերմունքում՝ մարդիկ (հատկապես երիտասարդները) աստիճանաբար ավելի դրական են վերաբերում հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց:

Ցավոք, պետական պատասխանատու մարմինները բավարար ուշադրություն չեն դարձնում այս խնդրին և չեն իրականացնում հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրական վերաբերմունքի մեղմանն ուղղված ծրագրեր:

Խնդրահարույց է, որ հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ կարծրատիպային վերաբերմունքն արմատացած է նույնիսկ ոլորտային քաղաքականություն մշակողների և ծառայություններ մատուցող հաստատությունների աշխատողների մոտ:

Ինչ վերաբերում է քաղաքականության և իրենց վերաբերյալ որոշումների կայացման հնարավորությանը և մասնակցությանը, ապա հոգեբուժական հաստատություններում բնակվող անձինք հիմնականում տեղյակ չեն իրենց իրավունքներից և չեն մասնակցում իրենց վերաբերող որոշումների կայացմանն ու իրագործմանը: Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող և անգործունակ ճանաչված անձանց փոխարեն որոշումները կայացնում են նրանց խնամակալները, որը կարող է լինել հաստատությունը: Իսկ կենցաղային մակարդակում հաստատություններում նրանց փոխարեն որոշումներ են կայացնում հաստատության աշխատակիցները:

## Առաջարկություններ

Հայաստանում հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց հոգեբուժական և խնամքի հաստատություններում ծառայությունների ապահովման համակարգը հակասում է մարդու մի շարք հիմնարար իրավունքների:

Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձինք պետք է հնարավորություն ունենան ստանալու խնամք և բուժում այնպիսի պայմաններում, երբ միջամտությունն իրենց իրավունքներին կլինի նվազագույնը: Անձը պետք է հնարավորություն ունենա օգտվել համայնքում առկա ծառայություններից, իսկ մյուս կողմից՝ համայնքում պետք է ապահովվեն անձի համար անհրաժեշտ ծառայությունները:

Համայնքահեն ծառայությունների դեպքում նաև անհրաժեշտ է համայնքում առկա ռեսուրսների (նյութական, մարդկային, այլ) ակտիվացումը և օգտագործումը:

Պետությունները պետք է օժանդակեն հաշմանդամություն ունեցող անձանց ինտեգրմանն ու լիիրավ ներգրավմանը համայնքում:

### **Ինչո՞ւ են նախընտրելի համայնքահեն ծառայությունները.**

- Համայնքահեն ծառայությունների որակն ավելի բարձր է:
- Համայնքահեն ծառայությունների միջոցով խնամքի կազմակերպումը պակաս ծախսատար է, քան ավանդական հոգեբուժական հաստատությունների միջոցով:
- Համայնքահեն ծառայությունների շնորհիվ հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատելու ընդհանրական մոտեցումից անցում է կատարվում անհատական մոտեցման. հաշվի են առնվում հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները, և կազմվում է անհատական աշխատանքի պլան:
- Համայնքահեն ծառայությունները հնարավորություն են տալիս հնարավորինս վաղ բացահայտել հոգեկան առողջության խնդիրները, բարձրացնել հասարակության վստահության մակարդակը տրամադրվող ծառայությունների հանդեպ, քանի որ «ամեն ինչ կատարվում է իրենց աչքի առջև»:
- Համայնքահեն ծառայությունների հիմքում դրված է հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը:

Այնուամենայնիվ, ապահիստիտուցիոնալացման գործընթացը դյուրին չէ, և անհրաժեշտ է հող նախապատրաստել ակնկալվող փոփոխությունների համար: Այդ նպատակով հետազոտական խմբի կողմից մշակվել են մի շարք կոնկրետ առաջարկություններ:

### **Միջոցառումներ՝ ուղղված հաստատություններ անձանց մուտքի կանխարգելմանը**

1. Սահմանել հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց՝ խնամքի հաստատություններ ընդունվելու արգելք: Փոխարենը մոբիլիզացնել և օգտագործել համայնքում առկա հանրային ռեսուրսները՝ անձին անհրաժեշտ և բավարար խնամքն ապահովելու համար:
2. Հսկողություն սահմանել նյարդահոգեբուժական հաստատություններ ընդունվող յուրաքանչյուր նոր անձի տրամադրվող ծառայությունների նկատմամբ, որպեսզի անձը չընդունվի նյարդահոգեբուժական հաստատություն միայն խնամք ստանալու նպատակով:
3. Վերացնել ՀՀ կառավարության թիվ 1112-Ն որոշմամբ սահմանված արգելքը՝ նույն որոշմամբ սահմանված ծառայությունները հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց տրամադրելու վերաբերյալ: Փոխարենը սահմանել հոգեւոցիալական և մտավոր

հաշմանդամություն ունեցող անձանց նշված ծառայությունները տրամադրելու կարգը: Սահմանել տնային պայմաններում և ցերեկային կենտրոններում խնամքի և սպասարկման տրամադրման հնարավորությունը և անհրաժեշտ պայմանները հոգեւոցհիւլական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց համար:

4. Վերաուղղել ֆինանսական, մարդկային և այլ ռեսուրսները՝ ավանդական փակ հաստատություններից՝ դեպի այլընտրանքային ծառայությունների ստեղծում և շարունակական զարգացում:
5. Ստեղծել/զարգացնել արտահիվանդանոցային ծառայություններ, որոնք կլինեն իրավունքահեն և կկանխարգելեն հոգեւոցհիւլական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց մուտքը հոգեբուժական և խնամքի փակ հաստատություններ:
6. Ստեղծել այլընտրանքային ծառայություններ հոգեւոցհիւլական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց ընտանիքների համար, օրինակ՝ ցերեկային կենտրոններ, մոբիլ թիմեր, տնային պայմաններում խնամքի տրամադրման ծառայություններ, և այլն:
7. Հոգեւոցհիւլական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ներկայումս մատուցվող մի շարք ծառայություններ պատվիրակել հասարակական կազմակերպություններին և մասնավոր հաստատություններին:
8. Սահմանել սոցիալական խնամքի կազմակերպությունների կողմից առավելագույն թվով անձանց ընդունելության շեմ:

#### **Խտրականության բացառում և ապահով միջավայր**

9. Ընդունել «Հավասարության մասին» ՀՀ օրենք: Մշակել ուղեցույց՝ «Հավասարության մասին» օրենքը հոգեւոցհիւլական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ հնարավոր խտրականության դեպքերով կիրառելու վերաբերյալ:
10. Մշակել գործողությունների ծրագիր ընտրական գործընթացներն ու արդարադատության համակարգը հոգեւոցհիւլական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի և հասանելի դարձնելու նպատակով:
11. Իրականացնել բնակչության իրազեկվածության և հոգեւոցհիւլական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ հարգալից, անխտրական վերաբերմունքի ձևավորմանն ուղղված միջոցառումներ:
12. Նպաստել հոգեբուժական և խնամքի փակ հաստատություններում բնակվող անձանց քայլ առ քայլ ներառմանը համայնքում: Օրինակ, որոշ ծառայությունների մատուցումը (բժշկական, հոգեբանի ծառայությունները) իրականացնել համայնքային ծառայությունների միջոցով: Խնամքի գործող ինստիտուցիոնալ հաստատություններում բնակվող յուրաքանչյուր անձի համար մշակել գործողությունների պլան՝ նրա կարողությունների վերականգնման, զարգացման, հասարակությունում նրա ներառման համար:

#### **Կրթություն, չափորոշիչներ**

13. Մշակել հոգեւոցհիւլական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց համայնքահեն ծառայությունների տրամադրման և համայնքում առկա ծառայությունները ներառական դարձնելու ուղեցույցներ:
14. Չարգացնել հոգեւոցհիւլական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատող մասնագետների մասնագիտական որակը, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ իրազեկվածությունը:

15. Հակազդել մասնագիտական գործունեության ընթացքում ապամոտիվացնող գործոններին՝ աշխատանքային պայմանների բարելավումից մինչև խրախուսական միջոցառումների իրականացում:
16. Չարգացնել մասնագետների մոտ սթրեսի կառավարման, հուզական այրման համախտանիշին արձագանքելու տեխնիկաները:
17. Մոտիվացնող մեխանիզմներ ներդնել կրթական համակարգում՝ խրախուսելով հոգեբույժների, հոգեբանների, խնամքի և սոցիալական աշխատանքի մասնագիտության գրավչության բարձրացմանը (զեղչեր, անվճար տեղեր, կրթաթոշակներ, և այլն):
18. Խրախուսել տեղական ինքնակառավարման մարմիններին՝ հիմնադրել համայնքահեն հաստատություններ իրենց համայնքում: Այս նպատակով իրականացնել փորձի փոխանակման ծրագրեր համայնքների ներկայացուցիչների և հաշմանդամություն ունեցող անձանց համար (այդ թվում՝ այլ երկրներից գործընկերների ներգրավմամբ):

### **Ծառայությունների մատչելիությունը**

19. Ապակենտրոնացնել հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց առաջարկվող ծառայությունները՝ հասանելի դարձնելով դրանք յուրաքանչյուրի համար՝ անկախ բնակության վայրից և սոցիալական վիճակից:
20. Ներդնել հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող ծառայությունների հասանելիության և մատչելիության ապահովման նոր մեխանիզմներ (օրինակ՝ ճանապարհաձախսի փոխհատուցման միջոցով):

### **Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավում որոշումների կայացման գործընթացում**

21. Վերացնել անգործունակ կամ անչափահաս անձանց նկատմամբ պատրոնաժի նշանակման արգելքը: Պատրոնաժի նշանակման գործընթացում անձը պետք է հնարավորություն ունենա մասնակցել թե՛ նշանակման, թե՛ պատրոնի ընտրության վերաբերյալ որոշման կայացմանը:
22. Մտավոր հաշմանդամություն ունեցող անձի համար ներդնել համայնքում «ընկերոջ» համակարգը: Մեկ անձ կցվում է մտավոր հաշմանդամություն ունեցող անձին, ժամանակ անցկացնում նրա տանը կամ այլ վայրերում:
23. Վերացնել խնամակալության և անձին գործունակությունից զրկելու համակարգը: Փոխարենը մշակել աջակցությամբ որոշումների կայացման մեխանիզմներ: Մշակել գործողությունների ծրագիր խնամակալության համակարգի վերացման և փոխարենը աջակցությամբ որոշումների կայացման մեխանիզմների ներդրման վերաբերյալ:
24. Հոգեբուժական և խնամքի փակ հաստատություններում բնակվող անձանց համար մշակել անհատական վերասոցիալականացման և կարողությունների վերականգնման պլան:
25. Նպաստել հոգեբուժական և խնամքի փակ հաստատություններում բնակվող և խնամք ստացող անձանց աշխատանքային զբաղվածությանը՝ հաստատությունից դուրս: Ներդնել հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության ապահովման ծրագրեր:
26. Նպաստել սոցիալական ձեռներեցության զարգացմանը հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց համար:
27. Նպաստել հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց խմբերի ներգրավմանը քաղաքականության մշակման և մշտադիտարկման գործընթացներում՝ ապահովելով մատչելի միջավայր: Ապահովել հոգեւոցիալական և

մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավումը՝ ՀՀ առողջապահության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներքո գործող մշտադիտարկման խմբերում:

28. Ապահովել հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքի իրացումը՝ դրա համար ստեղծելով անհրաժեշտ պայմաններ և ներգրավելով ռեսուրսներ:
29. Իրագրել տարբեր հաստատություններում գտնվող հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց՝ իրենց իրավունքների և դրանց իրացման հնարավորությունների մասին:
30. Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ընտանիքի անդամներին և այլ փոխկապված անձանց իրագրել հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և դրանց իրացման հնարավորությունների մասին:

### **Համագործակցություն և ցանցեր**

31. Ստեղծել համագործակցային ցանց՝ ներառելով բոլոր շահագրգիռ կողմերին. պետական, մասնավոր և հասարակական հատվածների ներկայացուցիչներին, ՏԻՄ ներկայացուցիչներին, ինչպես նաև՝ հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց ընտանիքների անդամներին:
32. Սահմանել հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձի սոցիալական վերականգնման գործընթացում համայնքի մասնակցության պահանջներ՝ ուղղված համայնքի մասնակցության ձևաչափի, տրամադրվող ռեսուրսների, պարտականությունների հստակեցմանը:
33. Ակտիվացնել և սոցիալական վերականգնման գործընթացում օգտագործել այն համայնքի ռեսուրսները, որում բնակվում է հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձը՝ ստեղծելով աջակցային միջավայր:

### **Մոլորվայի փորձը**

*Վերոնշյալ առաջարկությունների իրագործման առումով կարող է օգտակար լինել ՀԱ ոլորտում Մոլորվայի փորձը՝ հաշվի առնելով Հայաստանի և Մոլորվայի ՀԱ համակարգերի՝ ԽՍՀՄ-ից ժառանգած ընդհանրությունները: Երկրները համադրելի են նաև բնակչության թվաքանակի, տնտեսական և այլ ցուցանիշների առումներով:*

Մոլորվայի Հանրապետության կառավարության կողմից հաստատվել է 2017-2021թթ. Հոգեկան առողջության ազգային ծրագիրը: Այն սահմանում է երկրի ողջ տարածքում համայնքային հոգեկան առողջության ծառայությունների համակարգի ստեղծման և հոգեբուժական հիվանդությունների անհարկի հոսպիտալացման նվազեցման քաղաքականության շրջանակները: Ծրագրի նպատակն է՝ խթանել համայնքի մտավոր առողջությունը՝ զարգացնելով հոգեկան առողջության ինտեգրված ծառայությունները և բարձրացնելով հոգեբուժական խնամքի համակարգի գործունակությունը:

Մոլորվայում ուժի մեջ է «Հոգեկան առողջության համայնքահեն ծառայությունների զարգացման ռազմավարությունը» (2012-2021թթ.): 2014թ.-ից սկսած համայնքներում սկսել են հոգեկան առողջության կենտրոնների կարգավորման գործողությունները: Դրանք հոգեկան առողջության ինտեգրված ծառայության մաս են կազմում, ինչպես նաև հանդիսանում են առաջնային բուժօգնության ստորաբաժանումներ: Կենտրոնները ստեղծվել են այն վարչական

շրջաններում, որտեղ առկա է 100-ից մինչև 150 հազար բնակչություն: Մատուցվող ծառայություններն են.

- Խորհրդատվական ծառայություններ,
- Սոբիլ թիմեր և ճգնաժամային ծառայություններ:

Այդ կենտրոնների 3 գլխավոր ծրագրերն են.

1. Բժշկական և հոգեկան առողջության վերականգնման ծրագիրը՝ վերահսկողության և մասնագիտական խորհրդատվության միջոցով,
2. Ինստիտուցիոնալացման կանխարգելման ծրագիրը. կարևորվում է ապահիստիտուցիոնալացումը և անձի սոցիալական ներգրավումը հասարակական գործունեության մեջ,
3. Առողջական վիճակի պահպանման և բարելավման ծրագիրը. անձնական հիգիենայի պահպանության խորհրդատվություն, առողջ ապրելակերպի խթանում, սոմատիկ և հոգեբուժական հիվանդությունների կանխարգելում:

«Համայնք բոլորի համար - Մոլդովա»-ն ապահիստիտուցիոնալացմանն ուղղված ծրագիր է, որի հիմնական խնդիրներն են.

1. Մտավոր խանգարումներ ունեցող անձանց փակ հաստատություններից ետ վերադարձնել իրենց ընտանիքներ կամ այլընտրանքային համայնքային ծառայություններ,
2. Նպաստել համայնքում նոր ծառայությունների համար իրավական դաշտի զարգացմանը և մտավոր խնդիրներ ունեցող անձանց ավելի լավ սոցիալական ներգրավմանը,
3. Մշակել քաղաքականություն և իրավական փաստաթղթեր, ինչպիսիք են՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներգրավման ռազմավարությունը», «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներգրավման մասին» օրենքի նախագիծը և «Համատեղ բնակարանային և բնակարանային ծառայությունների համար չափանիշների և կանոնակարգեր» նախագիծը:

Տեղական մակարդակում ծրագիրը կենտրոնանում է հաշմանդամություն ունեցող անձանց ինստիտուցիոնալ կառույցներից դուրս բերելու և ինստիտուցիոնալացման կանխարգելման ծրագրերի վրա:

2008-2012թթ. Մոլդովայում հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող ավելի քան 70 անձ լքել է ինստիտուցիոնալ կառույցները, ևս 40 հոգու մուտքը հաստատություն կասեցվել է:

Կարևոր է նշել, որ Մոլդովան Եվրոպայի ամենաաղքատ երկրներից է, և այն ավելի մեծ ազդեցություն է կրել ֆինանսական ճգնաժամից, քան աշխարհի ցանկացած այլ երկիր: Չնայած դրան, Մոլդովային հաջողվեց իրականացնել կառույցներից մարդկանց դուրս բերումը: Միջոցներ ուղղվեցին համայնքային ծառայությունների զարգացմանը՝ ցույց տալով, որ ապակենտրոնացման գործընթացի իրականացումը հնարավոր է նույնիսկ այն դեպքում, երբ ֆինանսավորման հնարավորությունները սահմանափակ են:

Մոլդովայում գործում է նաև «Բաց երկխոսություն» այլընտրանքային ծառայությունը:

Աջակցության այս մեթոդն իրենից ներկայացնում է աջակցություն ցանցի (ընտանիքի անդամներ և ընկերներ) միջոցով հարգելով հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձի որոշումները:

Այս ծառայությունը տրամադրվում է տնային պայմաններում և առավել արդյունավետ է, երբ կիրառվում է վաղ փուլում:

Թիմը խնդրին արձագանքում է անմիջապես. 24 ժամվա ընթացքում փորձագետների թիմը միավորում է խնդիր ունեցող անձի սոցիալական շրջապատի՝ որքան հնարավոր է շատ մարդկանց: Նրանք հանդիպում են ամեն օր՝ 2-3 շաբաթ տևողությամբ: Այն ապահովում է անհապաղ, ճկուն և անհատականացված օգնություն, որը, սովորաբար, չի ենթադրում դեղամիջոցների օգտագործում:

«Բաց երկխոսություն»-ը հիմնված է 7 սկզբունքների վրա.

1. Շտապ օգնություն
2. Ցանցերի պահպանում
3. Ճկունություն
4. Պատասխանատվություն
5. Հոգեբանական շարունակականություն
6. Հանդուրժողականություն
7. Երկխոսություն

Մոբիլ թիմերը ձևավորվում են 5 ամբուլատորիաների աշխատակազմի ներկայացուցիչներից և մեկ ստացիոնար հաստատության ներկայացուցից: Բոլորն անցնում են համապատասխան վերապատրաստում:

## Հավելված 1. Կիսաձևայնացված հարցազրույցի հարցաշար

### Ա. Ընդհանուր տվյալներ

1. Կազմակերպության անվանում:
2. Հասցե:
3. Հեռախոսահամար(ներ):
4. Ֆաքս:
5. Կայք:
6. Էլ. փոստ:
7. Ֆեյսբուքյան էջ:
8. Կառույցի տեսակը:
  1. Պետական
  2. Ոչ պետական
9. Կառույցի կազմակերպչի րավական ձև:
  1. ՍՊԸ
  2. ՓԲԸ
  3. ԲԲԸ
  4. ՀԿ
  5. Հիմնադրամ
  6. Իրավաբանական անձանց միություն
  7. ՊՈԱԿ
  8. ՀՈԱԿ
  9. Այլ (նշել)
10. Կառույցի ենթակայություն:
  1. Առողջապահության նախարարություն
  2. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
  3. Համայնք (նշել անվանումը)
  4. Մարզպետարան (նշել անվանումը)
  5. Ենթակայություն չունի որևէ կառույցի
  6. Այլ (նշել անվանումը)
11. Ո՞ր թվականին է հիմնադրվել կազմակերպությունը:
12. Ո՞ր թվականից է կազմակերպությունը հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ծառայություններ մատուցում:
13. Ներկայացրեք կազմակերպության գործունեության համառոտ պատմությունը՝ նկարագրելով գործառույթների հնարավոր փոխակերպումները:
14. Ներկայացրեք կազմակերպության առաքելությունը, նպատակը, տեսլականը:

15. Ո՞վ կարող է օգտվել կազմակերպության ծառայություններից

1. Ցանկացած անձ
2. Միայն ՀՀ քաղաքացիները
3. Այլ (նշել) \_\_\_\_\_

16. Որո՞նք են կազմակերպության ծառայությունների հիմնական թիրախ խմբերը (նշել բոլոր հնարավոր պատասխանները)

1. Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձինք
2. Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ընտանիքի անդամները
3. Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական միջավայրի այլ անձինք (ընկեր, հարևան, այլ նշանակալի անձինք)
4. Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց նախկին բնակության համայնքները
5. Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ներկա բնակության համայնքները
6. Այլ (նշել)

17. Խնդրում ենք նկարագրել, թե վերն ընտրված յուրաքանչյուր թիրախ խմբի հետ ի՞նչ աշխատանք է տարվում և որտեղ:

	Նկարագրեք ծառայության բովանդակությունը, պայմանները, վճարի չափը, և այլն	Որտե՞ղ է մատուցվում այդ ծառայությունը (օրինակ՝ շահառուի տանը, կազմակերպությունում, ցերեկային կենտրոնում, և այլն)
17.1 Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձինք		
17.2 Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ընտանիքի անդամներ		
17.3 Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական միջավայրի այլ անձինք (ընկեր, հարևան, այլ նշանակալի անձինք)		
17.4 Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց նախկին բնակության համայնքները		

<b>17.5</b> Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ներկա բնակության համայնքները		
<b>17.6</b> Այլ (նշել)		

18. **Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց տարիքային ընդհանուր խմբերին են մատուցվում ծառայություններ:**
1. Բոլոր տարիքային խմբերի անձանց
  2. 0-17
  3. 18-65
  4. 66+
  5. Այլ (նշել)
19. **Այլ անձանց (ոչ հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող) տարիքային ընդհանուր խմբերին են մատուցվում ծառայություններ:**
1. Բոլոր տարիքային խմբերի անձանց
  2. 0-17
  3. 18-65
  4. 66+
  5. Այլ (նշել)
20. **Կազմակերպության ծառայություններից օգտվելու համար պարտադիր պայման է հաշմանդամության կարգ ունենալը (ԲՄՓՀ-ի միջոցով ճանաչված) (բոլոր պատասխանները մեկնաբանել):**
1. Այո, հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց համար
  2. Ոչ
21. **Եթե այո, նշեք, թե հաշմանդամության ընդհանուր կարգերի դեպքում են ծառայությունները մատուցվում:**
22. **Եթե այո, նշեք, թե ինչի՞ համար է անհրաժեշտ հաշմանդամությունը հաստատող փաստաթղթի առկայությունը (ինչո՞ւ հնարավոր չէ ծառայություն ստանալ առանց դրա):**
23. **Ո՞ր մարզերի բնակիչներն իրավունք ունեն օգտվել կազմակերպության ծառայություններից:**
1. Բոլոր մարզերի բնակիչները
  2. Երևան
  3. Արագածոտն
  4. Արարատ
  5. Արմավիր
  6. Գեղարքունիք
  7. Կոտայք
  8. Լոռի
  9. Շիրակ
  10. Սյունիք
  11. Վայոց Ձոր
  12. Տավուշ
24. **Եթե կազմակերպությունը ծառայություն է մատուցում միայն որոշակի մարզի/մարզերի բնակիչների, նշեք նաև կոնկրետ համայնքները:**

25. Ի՞նչ հատկանիշներ ունեցող հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց են ծառայություններ մատուցվում *(օրինակ՝ միայն անապահով անձանց, միայն մանկատան սաներին, միայն պատերազմի մասնակիցներին, և այլն)*:
26. Ի՞նչ հիմունքներով են ծառայությունները մատուցվում:
  1. Բոլոր ծառայություններն անվճար են
  2. Բոլոր ծառայությունները վճարովի են
  3. Կան և՛ անվճար, և՛ վճարովի ծառայություններ
27. Խնդրում ենք տրամադրել վճարովի ծառայությունների գնացուցակը:
28. Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվում է ճանապարհաձախսի փոխհատուցում:
  1. Այո
  2. Ոչ
29. Եթե այո, որքա՞ն և ի՞նչ պայմաններով:
30. Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ուղեկցողներին և/կամ ընտանիքի անդամներին տրամադրվում է ճանապարհաձախսի փոխհատուցում:
  1. Այո
  2. Ոչ
31. Եթե այո, որքա՞ն և ի՞նչ պայմաններով
32. Կազմակերպությունն ապահովում է հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց տրանսպորտային տեղաշարժը *(տնից կազմակերպություն և հետադարձ ուղևորությունը)*:
33. Եթե այո, նկարագրե՛ք ինչպես և նշե՛ք այդ գործընթացին բնորոշ հիմնախնդիրները:
34. Խնդրում ենք նշել՝ տրանսպորտային ի՞նչ միջոցներով է հնարավոր հասնել ձեր կազմակերպություն և որո՞նք են տրանսպորտային հաղորդակցության հիմնախնդիրները *(օրինակ՝ կազմակերպություն են հասնում միայն N26 և N53 միկրատավտոբուսները, գրաֆիկն անկայուն է, և ժամը 20:00-ից այս երթուղիները չեն գործում)*:
35. Նշե՛ք կազմակերպության կողմից 2015-2017թթ. ընթացքում սպասարկված անձանց ընդհանուր թիվը:
36. Նշե՛ք կազմակերպության կողմից 2017թ. ընթացքում սպասարկված անձանց ընդհանուր թիվը:
37. Նշե՛ք հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց առավելագույն թիվը, որ հնարավոր է սպասարկել մեկ տարվա ընթացքում:
38. Նշե՛ք կազմակերպության 2017թ. ընդհանուր բյուջեի ծախսային հատվածը *(ղրամ)*:
39. Խնդրում ենք տրամադրել կազմակերպության 2017թ. բյուջեի ծախսային հատվածի բացվածքը:
40. Կազմակերպության 2017թ. ընդհանուր բյուջեի որքան %-ն է պետական և որքանը՝ ոչ պետական ֆինանսավորմամբ:

41. Կազմակերպության բոլոր ծրագրերի ո՞ր տոկոսն է ուղղված հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց:
42. Կազմակերպության՝ հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ուղղված ծրագրերից/ծառայություններից որո՞նք են պետական և որո՞նք՝ ոչ պետական ֆինանսավորմամբ:
43. **Նկարագրեք կազմակերպության շենքային պայմանները** (յուրաքանչյուր ընտրված տարբերակ մեկնաբանել):
  1. Ունի հիմնանորոգման կարիք
  2. Ունի կոսմետիկ վերանորոգման կարիք
  3. Վերանորոգման կարիք չկա

#### **Բ. Մասնագետներ**

44. Խնդրում ենք տրամադրել ներկայումս գործող, առկա աշխատակիցների հաստիքացուցակը՝ յուր. հաստիքի համար նախատեսված աշխատավարձով:
45. Ներկայումս գործող, առկա աշխատակիցներից ովքե՞ր ունեն մասնագիտական կրթություն (այն անձինք, որոնց ներկա գործունեությունը համապատասխանում է մասնագիտությանը):
46. Ներկայումս առկա չդիպումավորված աշխատակիցներն ի՞նչ վերապատրաստումներ են անցել (նշել՝ յուրաքանչյուր աշխատակցի համար):
47. Խնդրում ենք տրամադրել թափուր հաստիքների ցուցակը և նշել՝ յուրաքանչյուր հաստիք որքան ժամանակ է թափուր (թափուր մնալու պահից մինչև հարցազրույցի իրականացման պահը՝ արտահայտված ամիսներով):
48. Խնդրում ենք նշել դրանցից յուրաքանչյուրի՝ թափուր մնալու պատճառները:
49. Ո՞ր դասընթացներն ու վերապատրաստումներն են պարտադիր աշխատակազմի համար, և ի՞նչ պարբերականությամբ է դրանցից յուրաքանչյուրն իրականացվում:
50. Ե՞րբ է տեղի ունեցել պարտադիր բնույթ կրող վերջին դասընթացը/ վերապատրաստումը:
51. Վերջին մեկ տարվա ընթացքում (հարցազրույցի իրականացման պահից հաշված) ՀԱ ոլորտին առնչվող ի՞նչ կամավոր դասընթացների են մասնակցել կազմակերպության աշխատակիցները:
52. Եթե որևէ կառույց ձեր կազմակերպության աշխատակիցներին առաջարկի անվճար դասընթաց/վերապատրաստում, ո՞ր թեմաները կընտրեիք (թվարկեք առնվազն 3 թեմա):

#### **Գ. Մատուցվող ծառայություններ<sup>4</sup>**

53. Հիվանդությունների միջազգային 10-րդ վերանայված դասակարգչով սահմանված հոգեկան և վարքի խանգարումների հետևյալ տեսակներից<sup>5</sup> որո՞նց են ուղղված Ձեր կազմակերպության ծառայությունները:

<sup>4</sup> ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 9-ի N1686-Ն որոշում՝ հոգեբուժական օգնության և սպասարկման տեսակների ցանկն ու կառուցվածքը հաստատելու մասին, <https://goo.gl/agAAkG>

Հիվանդության / Խնդրի անվանումը		Ծառայության առկայությունը
53.1	F00-F09 Օրգանական, ներառյալ սիմպտոմատիկ, հոգեկան խանգարումներ	1. Առկա է 2. Առկա չէ
53.2	F10-F19 Հոգեկան և վարքային խանգարումներ՝ հոգեակտիվ նյութերի գործածման հետևանքով	1. Առկա է 2. Առկա չէ
53.3	F20-F29 Շիզոֆրենիա, շիզոտիպային և զառանցանքային խանգարումներ	1. Առկա է 2. Առկա չէ
53.4	F30-F39 Տրամադրության (աֆեկտիվ) խանգարումներ	1. Առկա է 2. Առկա չէ
53.5	F40-F48 Ներոտիկ, սթրեսով պայմանավորված և սոմատոֆորմ խանգարումներ	1. Առկա է 2. Առկա չէ
53.6	F50-F59 Վարքային համախտանիշեր՝ պայմանավորված ֆիզիոլոգիական խանգարումներով և ֆիզիկական գործոններով	1. Առկա է 2. Առկա չէ
53.7	F60-F69 Չափահասի անձի և վարքի խանգարումներ	1. Առկա է 2. Առկա չէ
53.8	F70-F79 Մտավոր հետամնացություն	1. Առկա է 2. Առկա չէ
53.9	F80-F89 Հոգեբանական զարգացման խանգարումներ	1. Առկա է 2. Առկա չէ
53.10	F90-F98 Վարքային և հուզական խանգարումներ՝ սովորաբար մանկական և դեռահասության տարիքում սկսվող	1. Առկա է 2. Առկա չէ
53.11	F99-F99 Հոգեկան խանգարում՝ չճշտված	1. Առկա է 2. Առկա չէ

54. Ձեր կազմակերպությունում հոգեբուժական օգնության և սպասարկման հետևյալ տեսակներից որո՞նք են առկա, քանի՞ անձ է ներկայումս սպասարկվում, ի՞նչ գնացուցակով, և առավելագույնը քանի՞ անձ կարող է սպասարկվել:

Տեսակը	Եթե առկա է, քանի՞ անձ է հիմա սպասարկվում	Ո՞ր տարիքային խմբերն են նրանք ներկայացնում	Եթե ծառայությունը վճարովի է, նշեք վճարի չափը	Առավելագույնը քանի՞ անձ կարող է միաժամանակ սպասարկվել
54.1 Հոգեբուժական				

<sup>5</sup> Հիվանդությունների և առողջության հետ կապված խնդիրների միջազգային վիճակագրական դասակարգում, 10-րդ վերանայում (ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2013թ. սեպտեմբերի 19-ի N 871-Ն հրամանի հավելված, <https://goo.gl/Rjn1eT>)

<b>օգնություն սպասարկում</b> 1. Առկա է 2. Առկա չէ	և				
<b>54.2 Հոգեթերապևտիկ օգնություն սպասարկում</b> 1. Առկա է 2. Առկա չէ	և				
<b>54.3 Այլ</b> 1. Առկա է 2. Առկա չէ					

55. Ձեր կազմակերպությունն իրականացնո՞ւմ է արտահիվանդանոցային հոգեբուժական օգնություն և սպասարկում:

1. Այո
2. Ոչ

56. Եթե այո, արտահիվանդանոցային հոգեբուժական օգնության և սպասարկման հետևյալ տեսակներից որո՞նք են իրականացվում, քանի՞ անձ է ներկայումս սպասարկվում, ի՞նչ գնացուցակով և առավելագույնը քանի՞ անձ կարող է սպասարկվել:

Տեսակը	Եթե առկա է, քանի՞ անձ է հիմա սպասարկվում	Ո՞ր տարիքային խմբերն են նրանք ներկայացնում	Եթե ծառայություն ը վճարովի է, նշեք վճարի չափը	Առավելագույնը քանի՞ անձ կարող է միաժամանակ սպասարկվել
<b>56.1 Հոգեւոցիալական մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ամբուլատոր հետազոտություն և բուժում</b> 1. Առկա է 2. Առկա չէ	և			
<b>56.2 Հոգեւոցիալական մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց դիսպանսերային շարունակական հսկողություն</b> 1. Առկա է 2. Առկա չէ	և			
<b>56.3 Մահմանային վիճակներում գտնվող անձանց խորհրդատվական հսկողություն</b>				

1. Առկա է 2. Առկա չէ				
<b>56.4 Հոգեբույժի մոտ հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց արտահիվանդանոցային հսկողություն և հարկադիր բուժում</b> 1. Առկա է 2. Առկա չէ				
<b>56.5 Հոգեկան առողջության վերականգնում</b> 1. Առկա է 2. Առկա չէ				

57. Խնդրում ենք նշել՝ Ձեր կազմակերպությունն իրականացնո՞ւմ է հիվանդանոցային հոգեբուժական օգնություն և սպասարկում:

1. Այո
2. Ոչ

58. Եթե այո, հիվանդանոցային հոգեբուժական օգնության և սպասարկման հետևյալ տեսակներից որո՞նք են իրականացվում, քանի՞ անձ է ներկայումս սպասարկվում, ի՞նչ գնացուցակով և առավելագույնը քանի՞ անձ կարող է սպասարկվել:

Տեսակը	Եթե առկա է, քանի՞ անձ է հիմա սպասարկվում	Ո՞ր տարիքային խմբերն են նրանք ներկայացնում	Եթե ծառայությունը վճարովի է, նշեք վճարի չափը	Առավելագույնը քանի՞ անձ կարող է միաժամանակ սպասարկվել
<b>58.1 Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց հիվանդանոցային հետազոտություն և բուժում</b> 1. Առկա է 2. Առկա չէ				
<b>58.2 Քրոնիկ հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց խնամք</b> 1. Առկա է 2. Առկա չէ				
<b>58.3 Սահմանային վիճակներում գտնվող</b>				

<p>հոգեւոցիալական մտավոր հաշմանդամություն ունեցող հիվանդանոցային հետազոտություն բուժում</p> <p>1. Առկա է 2. Առկա չէ</p>				
<p>58.4 Հոգեւոցիալական մտավոր հաշմանդամություն ունեցող բժշկական հարկադիր ընդհանուր հոգեբուժական բաժանմունքում</p> <p>1. Առկա է 2. Առկա չէ</p>	<p>անձանց բնույթի բուժում՝ տիպի</p>			
<p>58.5 Հոգեւոցիալական մտավոր հաշմանդամություն ունեցող բժշկական հարկադիր հասուկ հոգեբուժական բաժանմունքում</p> <p>1. Առկա է 2. Առկա չէ</p>	<p>անձանց բնույթի բուժում՝ տիպի</p>			
<p>58.6 Հոգեւոցիալական մտավոր հաշմանդամություն ունեցող վերականգնողական բուժում</p> <p>1. Առկա է 2. Առկա չէ</p>	<p>անձանց</p>			
<p>58.7 Հոգեկան վերականգնում</p> <p>1. Առկա է 2. Առկա չէ</p>				

59. Ձեր կազմակերպությունն իրականացնո՞ւմ է հոգեբուժական փորձաքննություններ:

1. Այո

2. Ոչ

60. Եթե այո, հոգեբուժական փորձաքննության հետևյալ տեսակներից որո՞նք են իրականացվում:

1. Դատահոգեբուժական ամբուլատոր փորձաքննություն
2. Դատահոգեբուժական ստացիոնար փորձաքննություն
3. Ժամանակավոր անաշխատունակության փորձաքննություն
4. Բժշկասոցիալական փորձաքննություն
5. Ռազմաբժշկական փորձաքննություն
6. Այլ (նշել)

61. Ձեր կազմակերպությունում իրականացվո՞ւմ է Դեպքի վարում<sup>6</sup>:

1. Այո
2. Ոչ

62. Եթե այո, ո՞ր մասնագետների կողմից և ինչպե՞ս:

63. Ձեր կազմակերպությունը մատուցո՞ւմ է հետևյալ ծառայությունները:

Ծառայություն	Քանի՞ անձ է հիմա օգտվում այդ ծառայությունից	Ո՞ր տարիքային խմբերն են նրանք ներկայացնում	Նկարագրեք ծառայության բովանդակությունը և վճարի չափը (եթե վճարովի է)	Առավելագույնը քանի՞ անձ կարող է միաժամանակ օգտվել այդ ծառայությունից
63.1 Կրթական ծառայություններ 1. Այո 2. Ոչ				
63.2 Իրավաբանական խորհրդատվություն 1. Այո 2. Ոչ				
63.3 Ֆինանսական խորհրդատվություն 1. Այո 2. Ոչ				
63.4 Բժշկական խորհրդատվություն 1. Այո 2. Ոչ				
63.5 Հոգեբանական				

<sup>6</sup> Դեպքի վարում (քեյս մենեջմենթ) - մեկ կամ մի խումբ մարդկանց կողմից կազմակերպվող գործընթաց է, որի նպատակն է անհատի ֆորմալ և ոչ ֆորմալ ցանցի ռեսուրսների արդյունավետ պլանավորման, կազմակերպման, համակարգման և շարունակական վերահսկման միջոցով բավարարել անհատի բազմաբնույթ և բազմաթիվ կարիքները և բարելավել անձի սոցիալական գործառնումը հասարակությունում: Դեպք վարողը /քեյս մենեջեր/ դեպքի կառավարման մասնագետն է (ՀԱԽՈՒ անձանց խնամքի և սոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայությունների տրամադրման հայեցակարգ, <https://goo.gl/TTnxm8>):

խորհրդատվություն 1. Այո 2. Ոչ				
63.6 Մասնագիտական խորհրդատվություն աշխատաշուկայում ատկա իրավիճակի վերաբերյալ 1. Այո 2. Ոչ				
63.7 Դրամաշնորհների տրամադրում 1. Այո 2. Ոչ				
63.8 Դրամական օժանդակություն 1. Այո 2. Ոչ				
63.9 Բնաիրային օգնություն 1. Այո 2. Ոչ				
63.10 Կացարանով ապահովում 1. Այո 2. Ոչ				
63.11 Անհրաժեշտ ծառայություն ստանալու համար ուղղորդում, միջնորդություն և աջակցություն 1. Այո 2. Ոչ				
63.12 Այլ (նշել անվանումը)				
63.13 Այլ (նշել անվանումը)				
63.14 Այլ (նշել անվանումը)				

64. Ձեր կազմակերպությունը մատուցո՞ւմ է հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման հետևյալ ծառայությունները:

Ծառայություն	Քանի՞ անձ է հիմա օգտվում	Ո՞ր տարիքային	Նկարագրեք ծառայության	Առավելագույնը քանի՞ անձ կարող է
--------------	-----------------------------	------------------	--------------------------	------------------------------------

	այդ ծառայությունից	խմբերն են նրանք ներկայացնու մ	բովանդակությունը և վճարի չափը (եթե վճարովի է)	միաժամանակ օգտվել այդ ծառայությունից
<b>64.1 Արվեստի միջոցով թերապիա</b> 1. Այո 2. Ոչ				
<b>64.2 Մշակութային միջոցառումներ</b> 1. Այո 2. Ոչ				
<b>64.3 Էրգոթերապիա<sup>7</sup></b> 1. Այո 2. Ոչ				
<b>64.4 Ավագաթերապիա</b> 1. Այո 2. Ոչ				
<b>64.5 Սպորտի և առողջ ապրելակերպի խթանման միջոցառումներ</b> 1. Այո 2. Ոչ				
<b>64.6 Անկախ կյանքի հմտությունների ուսուցում</b> 1. Այո 2. Ոչ				
<b>64.7 Այլ (նշել անվանումը)</b>				
<b>64.8 Այլ (նշել անվանումը)</b>				
<b>64.9 Այլ (նշել անվանումը)</b>				

<sup>7</sup> Էրգոթերապիա. միջամտության ուղի, որի միջոցով վերականգնվում է ֆիզիկական և մտավոր խնդիրներ ունեցող անձանց նպատակային գործունեությունը և աշխատանքային կարողությունը: Էրգոթերապիա /անվանում են նաև՝ օկուպացիոն թերապիա/ տերմինը նշանակում է զբաղվածության միջոցով թերապիա /occupation- զբաղվածություն/ (ՀԱՆՈՒՐ անձանց խնամքի և սոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայությունների տրամադրման հայեցակարգ, <https://goo.g/TTnxm8>):

65. Ձեր կազմակերպությունը մատուցում է հոգեւոցախալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայություններ:

1. Այո
2. Ոչ

66. Եթե այո, նշեք հնարավոր բոլոր տարբերակները:

1. Շուրջօրյա կազմակերպության տարածքում
2. Ցերեկային ժամերին՝ կազմակերպության տարածքում
3. Շուրջօրյա՝ տնային պայմաններում
4. Ցերեկային ժամերին՝ տնային պայմաններում
5. Ցերեկային կենտրոններում
6. Այլ (նկարագրել) \_\_\_\_\_

67. Հոգեւոցախալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրազեկման ի՞նչ եղանակներ են կիրառվում ձեր կազմակերպությունում՝ վերջիններիս՝ կազմակերպություն մուտք գործելու պահին:

68. Հոգեւոցախալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրավական աջակցության և խորհրդատվության ի՞նչ եղանակներ են կիրառվում ձեր կազմակերպությունում՝ վերջիններիս՝ կազմակերպությունում գտնվելու ընթացքում:

69. Հաստատության պայմանների և իրենց վերաբերող այլ խնդիրների առնչությամբ բողոք ներկայացնելու ի՞նչ հնարավորություններ ունեն հոգեւոցախալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձինք:

70. Վերջին անգամ ե՞րբ է նմանատիպ բողոք ներկայացվել, ո՞ր հարցի վերաբերյալ, և ի՞նչ արդյունքի է հանգեցրել:

71. 2017թ. ընթացքում նմանատիպ քանի՞ բողոք է եղել, ո՞ր հարցերի վերաբերյալ, և ի՞նչ արդյունքների են դրանք հանգեցրել:

72. Խնդրում ենք նկարագրել հոգեւոցախալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ծառայություններ մատուցող այլ կազմակերպությունների հետ Ձեր կազմակերպության համագործակցության խոչընդոտներն ու հիմնախնդիրները: Մասնավորապես.

1. Համատեղ իրականացվող ծրագրերի առնչությամբ
2. Գործառնությունների վերաձեռնկցի խուսափելու և ծառայությունների ներդաշնակեցման առնչությամբ
3. Հոգեւոցախալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ տեղեկատվության փոխանակման առնչությամբ
4. Փորձի փոխանակման և փոխադարձ ուսուցման առնչությամբ
5. Այլ (նկարագրել)

73. Խնդրում ենք նշել՝ ստորև թվարկված ուղղություններում/բնագավառներում ի՞նչ հիմնախնդիրներ կան, և որո՞նք են դրանց լուծման Ձեր պատկերացումները/առաջարկները:

	Հիմնախնդիրներ	Առաջարկություններ
<b>Սոցիալական քաղաքականություն</b>		
Ռազմավարություն		
Հայեցակարգ		
Օրենք և ենթաօրենսդրական		

ակտեր		
Իրականացվող ընթացիկ միջոցառումներ և ծրագրեր		
Քաղաքականության մշակման գործընթաց		
Հիմնական դերակատարների համագործակցություն		
<b>Ծառայությունների տրամադրման համակարգ</b>		
Ծառայություններ տրամադրող կառույցների տեսակներ		
Առաջարկվող ծառայությունների տեսականի		
Ծառայությունների հարմարեցվածությունը շահառուների կարիքներին (շենքային պայմաններ, ճանապարհածախս, այլ)		
Առկա ծառայությունների կառավարման, ենթակայության և ֆինանսավորման համակարգ		
Մասնագիտական կազմ և կոմպետենցիաներ (ներառյալ՝ վերապատրաստումները)		
<b>Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացում</b>		
Հասարակության վերաբերմունք		
Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ձայնի լսելիություն և մասնակցություն՝ իրենց վերաբերող որոշումների կայացմանը		
Առողջապահական ծառայությունների հասանելիություն (արժեք, ֆիզիկական մատչելիություն...)		

Սոցիալական ծառայությունների հասանելիություն (արժեք, ֆիզիկական մատչելիություն...)		
Այլ հիմնախնդիրներ		
N1		
N2		
N3		

**74. Խնդրում ենք նշել, թե Ձեր կողմից առաջարկված փոփոխությունների համար.**

1. Փոփոխության հիմքում ի՞նչ արժեքներ են դրվելու
2. Ո՞վ, ովքե՞ր պետք է դառնան հիմնական դերակատարները
3. Ինչպիսի՞ ռեսուրսներ են հարկավոր (մարդկային, նյութական, այլ)
4. Որո՞նք պետք է լինեն անհրաժեշտ ֆինանսական միջոցների աղբյուրները
5. Ի՞նչ ենթադրյալ խոչընդոտներ կարող են առաջանալ
6. Ինչպիսի՞ ազդեցություն կունենա հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձի կյանքի որակի վրա
7. Այլ

**75. Խնդրում ենք տրամադրել այլ պետական և ոչ պետական կազմակերպությունների տվյալներ<sup>8</sup>, որոնք հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ծառայություններ են մատուցում կամ պլանավորում են նմանատիպ ծառայություններ մատուցել:**

**76. Խնդրում ենք տրամադրել փորձագետների տվյալներ, որոնց հետ նույն թեմայով հարցազրույց կարող ենք իրականացնել:**

**77. Հարցազրուցավարին<sup>1</sup> նշեք հարցվողի անուն-ազգանունը, կազմակերպությունում զբաղեցրած պաշտոնը, ՀԱ ոլորտում փորձը՝ տարիներով և կոնտակտները՝ հետագա կապի համար (*հեռախոս, e-mail*):**

**78. Այլ դիտարկումներ (*հարցազրուցավարի կողմից*):**

<sup>8</sup> Անվանում, հեռախոսահամար, հասցե, էլ. փոստ, այլ տվյալներ:

## Հավելված 2. Փորձագիտական հարցազրույցի հարցաշար

1. Խնդրում ենք նշել՝ ստորև թվարկված ուղղություններում/բնագավառներում ի՞նչ հիմնախնդիրներ կան և որո՞նք են դրանց լուծման՝ Ձեր պատկերացումները/առաջարկները:

	Հիմնախնդիրներ	Առաջարկություններ
<b>Մոցիալական քաղաքականություն</b>		
1.1 Ռազմավարություն		
1.2 Հայեցակարգ		
1.3 Օրենք և ենթաօրենսդրական ակտեր		
1.4 Իրականացվող ընթացիկ միջոցառումներ և ծրագրեր		
1.5 Քաղաքականության մշակման գործընթաց		
1.6 Հիմնական դերակատարների համագործակցություն		
<b>Ծառայությունների տրամադրման համակարգ</b>		
1.7 Ծառայություններ տրամադրող կազմակերպությունների տեսակներ		
1.8 Առաջարկվող ծառայությունների տեսականի		
1.9 Ինստիտուցիոնալ (ավանդական) ծառայություններ		
1.10 Այլընտրանքային ծառայություններ (1. առկա այլընտրանքային ծառայությունների որակը և 2. նոր այլընտրանքային ծառայությունների կարիքը)		
1.11 Ծառայությունների հարմարեցվածությունը շահառուների կարիքներին (շենքային պայմաններ, ճանապարհաձախս, այլ)		
1.12 Առկա ծառայությունների կառավարման, ենթակայության և ֆինանսավորման համակարգ		
1.13 Մասնագիտական կազմ և կոմպետենցիաներ (ներառյալ՝ վերապատրաստումները)		
<b>Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացում</b>		
1.14 Հասարակության վերաբերմունք		
1.15 Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն		

ունեցող անձանց ձայնի լսելիություն և մասնակցություն՝ իրենց վերաբերող որոշումների կայացմանը		
1.16 Առողջապահական ծառայությունների հասանելիություն (արժեք, ֆիզիկական մատչելիություն...)		
1.17 Սոցիալական ծառայությունների հասանելիություն (արժեք, ֆիզիկական մատչելիություն...)		
<b>Այլ հիմնախնդիրներ</b>		
1.18 N1		
1.19 N2		
1.20 N3		

2. **Խնդրում ենք նշել, թե Ձեր կողմից առաջարկված յուրաքանչյուր փոփոխության համար.**
  - 2.1 Փոփոխության հիմքում ի՞նչ արժեքներ են դրվելու
  - 2.2 Ո՞վ/ովքե՞ր պետք է դառնան փոփոխությունների հիմնական դերակատարները
  - 2.3 Փոփոխությունների համար ի՞նչ ռեսուրսներ են հարկավոր (մարդկային, նյութական, այլ)
  - 2.4 Որո՞նք պետք է լինեն անհրաժեշտ ֆինանսական միջոցների աղբյուրները
  - 2.5 Ի՞նչ ենթադրյալ խոչընդոտներ կարող են լինել
  - 2.6 Ինչպիսի՞ ազդեցություն կունենա առաջարկվող փոփոխությունը հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձի կյանքի որակի վրա
  - 2.7 Այլ
3. **Խնդրում ենք տրամադրել պետական և ոչ պետական կազմակերպությունների տվյալներ, որոնք հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ծառայություններ են մատուցում կամ պլանավորում են նմանատիպ ծառայություններ մատուցել:**
4. **Խնդրում ենք տրամադրել փորձագետների տվյալներ, որոնց հետ նույն թեմայով հարցազրույց կարող ենք իրականացնել:**
5. **Հարցվողի անուն-ազգանունը:**
6. **Կազմակերպությունը և դրանում զբաղեցրած պաշտոնը:**
7. **ՀԱ ոլորտում փորձը՝ տարիներով:**
8. **Մասնագիտությունը, կրթական և գիտական աստիճանները:**
9. **Հրապարակումները (եթե այդպիսիք կան):**
10. **Կոնտակտները՝ հետագա կապի համար (հեռախոս, e-mail):**

### **Հավելված 3. Փորձագիտական հարցման մասնակիցների ցանկ**

#### **Մարիետա Խուրջուդյան**

Ազգային ժողով, Առողջապահական ոլորտի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի փորձագետ, Հայկական հոգեբուժական ասոցիացիայի գործադիր տնօրեն  
[marietta8383@gmail.com](mailto:marietta8383@gmail.com), հեռ. 099 66 83 83

#### **Նունե Փաշայան**

ՀՀ Առողջապահության նախարարության աշխատակազմ, Մոր և մանկան առողջության պահպանման վարչության երեխաների առողջության պահպանման բաժնի պետ  
[nunpashayan@gmail.com](mailto:nunpashayan@gmail.com), հեռ. 099 77 27 79

#### **Անահիտ Գևորգյան**

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Տարեցների և հաշմանդամների վարչության պետի տեղակալ  
[anahit.gevorgyan@mlsa.am](mailto:anahit.gevorgyan@mlsa.am), հեռ. 096 00 45 55

#### **Արմեն Սողոյան**

Հայկական հոգեբուժական ասոցիացիայի նախագահ, Հայկական բժշկական ասոցիացիայի նախագահ, Համաշխարհային հոգեբուժական ասոցիացիայի պատվավոր անդամ, ֆինանսների քարտուղար, Հոգեւոցիալական կարգավորման կենտրոնի գիտական ղեկավար  
[soghoyan@yahoo.com](mailto:soghoyan@yahoo.com), հեռ. 091 42 26 85

#### **Անահիտ Պապիկյան**

Բաց Հասարակության հիմնադրամներ – Հայաստան, Հանրային առողջապահության ծրագրի համակարգող  
[panahit58@gmail.com](mailto:panahit58@gmail.com), հեռ. 099 33 79 19

#### **Կարինե Լյուկեջյան**

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲԸ, մանկական հոգեբուժական դիսպանսերի վարիչ  
[karine03@gmail.com](mailto:karine03@gmail.com), հեռ. 091 51 82 12, 010 63 88 37

#### **Մարիետա Թեմուրյան**

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեա, Վանաձորի գրասենյակ, «Խտրականության դեմ պայքարի և հանուն հավասարության» կոալիցիայի անդամ  
[mtemuryan@hcav.am](mailto:mtemuryan@hcav.am), հեռ. 094 42 51 52

#### **Վահագն Սաժինյան**

«Խնամք» ՀԿ նախագահ, «Սպիտակի խնամքի տուն» ծրագրի տնօրեն  
[khnammk@hotmail.com](mailto:khnammk@hotmail.com), հեռ. 091 46 57 75

#### **Լիլիթ Բաղդասարյան**

«Ամբրա» հոգեկան բարեկեցության կենտրոն ՀԿ, Հոգեւոցիալական կարգավորման կենտրոն՝ «Ռեքավերի» քոլեջի ղեկավար, Հայկական հոգեբուժական ասոցիացիա  
[l.v.baghdasaryan@mail.ru](mailto:l.v.baghdasaryan@mail.ru), հեռ. 094 33 39 41

**Վարդգես Ավագյան**

«Մեփլ Լիֆս» հայ-կանադական բժշկական կլինիկայի տնօրեն  
[vardges\\_avagyan@yahoo.com](mailto:vardges_avagyan@yahoo.com), հեռ. 094 65 07 17, 091 42 15 35

**Սյուզաննա Պետրոսյան**

«Իմ ուղին» ուսումնավերականգնողական ցերեկային կենտրոն  
[suzannapetrosyan@gmail.com](mailto:suzannapetrosyan@gmail.com), հեռ. 091 85 99 31

**Հարություն Բալասանյան**

Խարբերդի մասնագիտացված մանկատուն  
[hbalasanian@yahoo.com](mailto:hbalasanian@yahoo.com), հեռ. 091 42 79 60, 055 42 79 60